

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆ ՈՒ ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՎԷՊԻ ՀԱՏՈՒԱԾԸ

Գրիգոր Մագիստրոսի նամակներից մէկում՝ ուղղուած Մոկաց եւ Մանազկերտի Գրիգոր եպիսկոպոսին, պահպանուել է մի հատուած Արտաշէս արքայի մասին հիւսուած վէպից.

Ո տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք
Որպէս օրէն է թագաւորաց:

Այս նամակը եւ վիպական հատուածը քննութեան նիւթ են դարձել տարբեր հետազօտողների համար (Ղ. Ալիշան, Մ. Էմին, Գր. Խալաթեանց, Լ. Խաչիկեան): Առկայ հետազօտութիւններից իրաքանչիւրում այս վիպական հատուածը ընկալուել եւ մեկնուել է իրովի, որով եւ այժմ անկարելի է խօսել դրա միանշանակ իմաստի ու բովանդակութեան մասին:

Ըստ հ. Ղ. Ալիշանի «... Մագիստրոսին յիշածն, թէ Արտաշէս Պարթեւ մեռած ատեն[1] յիշելով կենաց եւ տարւոյն գարունը, երբ առաւօտուն լոյսը ցողին հետ խառնած բարակ միգի պէս գեղերու եւ քաղքներու վրայ կը

[1] Ալիշանի այս արտայայտութիւնը՝ մեռած ատեն, յետագայ ուսումնասիրողների մօտ թիւր կարծիք է առաջացրել, թէ ըստ Ալիշանի, հատուածում բերուած խօսքը Արտաշէս արքան ասել է մահացած վիճակում (մահից յետոյ): Մինչդեռ Ալիշանի ասածից նման բան չի յետեւում: Բանն այն է, որ Ալիշանի լեզուն արեւմտահայ աշխարհաբարն է, որտեղ «մեռած ատեն» նշանակում է մեռնելու ժամանակ, մահամերձ վիճակում (ինչպէս օր. քալած ատեն=քայլելու ժամանակ, քայլելու ընթացքում, քայլելուց, խօսած ատեն= խօսելու ժամանակ ևն):

տարածէր, ըսած ըլլայ. ո տայր ինձ...»[2]: Ըստ Մ. Էմինի, «վիպասանն այդ-տեղ պատկերում է մահացած թագաւորին, որն ըստուերների թագաւորութեան մէջ իր ափսոսանքն է յայտնում անդարձ գնացած թագաւորական զուարճութիւնների համար, այն բանի համար, որ ինքն այլեւս չի տեսնի ծխնելոյզներից քուլա-քուլա բարձրացող եւ առաւօտներին շէների ու քաղաքների վրայ տարածուող ծուխը»[3]: Ըստ Գր. Խալաթեանցի, «ոմն Արտաշէս Պարթեւ ափսոսում է, որ ձմռանը՝ Ահեկան ամսին, չի կարող գնալ որսի՝ արքաների ամենասիրած զուարճանքին, ինչպէս անում էր ինքը ամռանը՝ նաւասարդ ամսին (օգոստոսին), որը յոյժ նպաստաւոր ժամանակ էր եղջերուների եւ եղնիկների որսի համար»[4]:

Լ. Խաչիկեանը, առարկելով իր նախորդներին, տալիս է լրիւ այլ մեկնութիւն: Ըստ նրա, հատուածի առաջին տողը նշանակում է. «Ով կը տար ինձ ահկի (ծխանի=յունուար) ամսուայ ծուխը»: Սրա համար նա հիմք է ընդունել ծխան բառի գործածումը ահկի իմաստով «Ասկղեպիադեայ վասն չորից բնութեանց մարդոյ...» թարգմանական ձեռագիր աշխատութեան մէջ: Ըստ Լ. Խաչիկեանի, «վիպական հատուածի առաջին երկու տողերում մահամերձ Արտաշէս Ա, հաւանաբար երազել է ահկի-ծխան և նաւասարդ ամիսներին կատարուող տօնախմբութիւնները...»[5]:

Անկասկած, խնդրոյ առարկայ վիպական պատառիկը լոկ մի հատուած է շատ աւելի ծաւալուն շարադրանքից, մեզ հասած՝ զուտ պատահաբար: Հենց պատառիկի կարճութիւնն է պատճառը, որ տակաւին միանշանակ ճշդուած չէ դրա իմաստը: Հատուածի իմաստը առաւել լրիւ հասկանալու համար հարկ է կամ իմանալ վիպական շարադրանքի մէջ դրան նախորդող ու յաջորդող հատուածները (որ անդարձ կորած են մեզ համար) եւ կամ գոնէ իմանալ, թէ ինչ կապակցութեամբ եւ որպէս ինչ է մէջ բերուել դա Գր. Մագիստրոսի նամակում: Ուրեմն պէտք է լրիւ հասկանալ նամակի բովանդակութիւնը: Իսկ նամակը գրուած է խրթին լեզուով եւ բացի այդ պարունակում է մանուածապատ համեմատութիւններ ու հանելուկներ: Ահա նամակն ամբողջութեամբ.

Յաւուրս ձմերայնոյ եղեալ ահագին որոտումն յամսեանն Ահեկի, որ էր քսաներորդ երրորդ. եւ զայսոսիկ գրեաց ի Գրիգոր եպիսկոպոսն Մոկաց եւ Մանազկերտոյ, սակս ելոյ եւս անձրեւ սաստիկ:

Կամիմք իմանալ զձիածինն պատուեալ ծայրագոյն ծերունւոյն հիբար տարտամեալն ամոքեալ թխանայ հերօք՝ զհիքութեան բերելով ձեւ իգական: Թերեւս եւ Առէս լուծեալ զմակավազեանն հրաշունչ մօրուեղ յօրնայածուկ ի դովրացի դովար յեղափոխէ. որ երեկեանն ճայթիւն գոռմանն եւ խիսնջիւն վրնջելոյ պայթուցեալ պապչեկին լալաւարթիւն ալաւխութման քաղուն: Ուրեմն նահանջեալ յԱմնոսէ զՆիսեանն նշանակեալ ցուցակութիւն երեւակայէր. եւ այն ի կողմանէ տասնեկին եօթն անկ-

---

[2] **Հ. Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ, էջ 112, Վենետիկ, 1870:

[3] **Н. Эмин**, Моисей Хоренский и древний эпос Армянский, ст. 80—81, Москва, 1881.

[4] **Г. Халатянц**, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, ст. 311, Москва, 1896.

[5] **Լ. Խաչիկեան**, «Գր. Մագիստրոսի մօտ Արտաշէս Ա-ի վերաբերեալ պահպանուած վիպական հատուածի մասին», Գրական-բանասիրական յետախուզումներ, գիրք առաջին, էջ 405—424, Երեւան, 1946:

եանցն յունականին թուոյ. կամ եթէ ի Թորգոմեան՝ երից եօթն անկեանցն եռակի բարդեցելոց Ահկեան, որում Արտաշէսն Պարթեւ բաղձայր մլոյ մրրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար շինից եւ քաղաքաց: —Ո տայր ինձ,—ասէր,—զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի, զվազելն եղանց եւ զվագելն եղջերուաց, մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք, որպէս օրէն է թագաւորաց: Եւ զայս ասելն ի վախճանելն իւրում, զոր ի գոեհիկս աւանդեալ գտաք: Ողջ լեր[6]:

Նամակը ունի խորագիր, որ ամենայն հաւանականութեամբ գրուած է Գրիգոր Մագիստրոսից յետոյ նամակաւոր կազմողի կամ խմբագրի կողմից: (Ստորեւ կը տեսնենք, որ իրօք, խորագիրը չէր կարող հեղինակային լինել): Նամակում առկայ է տոմարական մի հաշուարկ, որի վրայով բոլոր յետազօտողները անցել են լռելեայն, առանց խորամուխ լինելու: Այդ մասը վերծանելու միակ փորձը կատարել է նամակաւոր կազմողը (կամ խմբագիրը), որը եւ իր ստացած արդիւնքը կցել է նամակին, որպէս վերնագիր: Յետագայ բոլոր ուսումնասիրողները վերնագրում տրուածը ընդունել են իբրեւ ելակէտային ճշմարտութիւն: Սակայն, բնականաբար, ոչ մի լուրջ հիմք չկայ, առանց ստուգման սոյն խորագիրը նամակի ճիշդ բացատրութիւն համարելու: Նկատենք, որ եթէ վերջին աւելի քան 120 տարիների ընթացքում հայագէտների մի քանի սերունդ չեն կարողացել վերծանել դա, որեւէ հիմք չունենք վստահելու անյայտ խմբագրի տուած վերծանութեանը, որը մատուցուած է զուտ որպէս եզրակացութիւն, առանց բացատրութեան (հնարաւոր չէ իմանալ, թէ ինչ դատողութեամբ և ինչի հիման վրայ է վերծանողը եկել խորագրում նշուած եզրակացութեանը): Ի դէպ, տոմարական հաշուարկի արդիւնքից զատ խորագրում նշուած է եւ նամակի սկզբնամասի բովանդակութիւնը: Ըստ խորագրի հեղինակի, ձմռանը, աճեկի 23-ին տեղի է ունեցել աճագին որոտում, եւ տեղացել է սաստիկ անձրեւ, որ եւ առիթ է դարձել նամակի գրութեան: Տարօրինակ է, որ սա եւս առանց քննութեան ընդունուել է իբրեւ ճշմարտութիւն (տե՛ս ստորեւ): Խորագրից զատ նամակի մնացեալ ողջ շարադրանքում չկայ որեւէ բառ, որ նշանակի ամպրոպ կամ անձրեւ: «Գոռումն» բառը, ըստ Հայկազեան բառարանի հեղինակների, նշանակում է «գոռողութիւն, խրոխտումն, ապառնումն, գրգիռ մարտի, մեծամեծս փքալն եւ փոնչելն», իսկ «գոռամ» բայը նշանակում է «մոնչալով գրգռիլ ի մարտ, գոռոզանալ, խրոխտանալ, խիզախել ի կռիւ, մարտնչիլ» եւ այլն: Սրանցից եւ ոչ մէկը չունի անձրեւ, ամպրոպ իմաստը: Նոյն կերպ եւ «ճայթիւն» բառը, որի իմաստից եւս չի կարող բխել խորագրում գրուածը: Նամակի մնացած բառերը շատ աւելի հեռու են ամպրոպային իմաստից: Նամակից ամպրոպային բովանդակութիւն բխեցնելու թէրեւս միակ հնարաւորութիւնը նամակում գրուածը փոխաբերաբար ընկալելն է, որը սակայն պատճառաբանուած, հիմնաւորուած չէ: Ուստի, վերնագրում շարադրուածը կարելի չէ բխեցնել նամակի բովանդակութիւնից, եւ ըստ այդմ, խորագիրը չի կարող հեղինակային լինել: **Ուրեմն, վերնագրի տուեալները պարզելուց: Արդ, չենք կարող հիմք ընդունել նամակի բովանդակութիւնը**

---

[6] Նամակի շարադրանքը բերուած է ըստ Կ. Կոստանեանի հրատարակածի (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 86—87, Ալէքսանդրապոլ, 1910): Որոշ մանր շտկումներ արուել են հիմք ընդունելով հրատարակչի տուած տարընթերցումները, Մ. Էմինի և Գ. Խալաթեանցի մէջբերումները և Հայկազեան բառարանի օրինակները: Այս շտկումների համար պարտական եմ բնագրագէտ Ա. Քէօշկէրեանին, որին եւ յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը:

անտեսենք վերնագիրը եւ փորձենք նամակը հասկանալ ինքն իրենով, եւ ապա դրանից ելնելով, պարզենք վիպական հատուածի բովանդակությունն ու կապը նամակի հետ:

Այս մասին ցարդ կատարուած ամենահամակողմանի և մանրամասն վերլուծությունը Լ. Խաչիկեանի նշուած աշխատությունն է, որ սակայն զերծ չէ թերություններից.

ա) Չի պարզուած նամակի բուն իմաստը. ինչի համար է Գր. Մագիստրոսը գրել նամակը, ինչ է կամեցել յայտնել Մոկաց եւ Մանազկերտի եպիսկոպոսին, կամ ինչ է ուզեցել իմանալ նրանից:

բ) Նամակի մի հատուածը (ինչպէս յետոյ կը տեսնենք՝ առանցքային կարեւորություն ունեցող) ինչպէս նախորդ բոլոր յետազօտողների, այնպէս էլ Լ. Խաչիկեանի կողմից մնացել է առանց քննության, շրջանցուել է, որով եւ կասկածելի է դառնում նամակի մնացած մասի համար տրուած մեկնությունը:

գ) Վիպական հատուածի ներմուծումը նամակի մէջ պատճառաբանւում է շատ կասկածելի կերպով (այդ մասին աւելի մանրամասն՝ ստորեւ):

Ահա Լ. Խաչիկեանի վերջնական եզրակացությունները.

«ա. Նամակի գրության առիթը, ձմռանը՝ ահկի-ծիսան ամսի 23-ին տեղի ունեցած «ահագին որոտումն», «սաստիկ անձրեւն» է եղել:

բ. Վերոյիշեալ առիթն օգտագործելով՝ Գր. Մագիստրոսը համառօտակի շարադրել կամ ակնարկ է նետել ամպրոպաբեր եւ անձրեւաբեր բարի ու չար աստուածների կուի վերաբերեալ եղած մի երկու առասպելների վրայ, որոնցից մէկը յիշեցնում է վիշապաքաղ Վահագնի հայկական առասպելը՝ յունական պատճառանքով (Արէս փոխանակ Վահագնի):

գ. Նամակի վերջում Արտաշէսեան ցիկլից բերուած վիպական հատուածը նախորդ ուսումնասիրողների կողմից (Ալիշան, Էմին, Խալաթեանց) մեկնուել է անբաւարար եւ ոչ գոհացուցիչ: Նրանք հատուածը քննարկել են առանց խորամուխ լինելու նամակում յիշուած առասպելների բովանդակությանը եւ չեն կարողացել մեկնել վիպական հատուածի առաջին տողը:

դ. Առաջին՝ «Ո տայր ինձ զծուխ ծխանի» տողը նշանակում է ոչ թէ՝ «Ով կը տար ինչ ծխնելոյզներից (ելնող) ծուխը», ինչպէս հասկացուել է, այլ՝ **«Ով կը տար ինձ ահկի (ծխանի=յունարար) ամսուայ ծուխը»:**

ե. Ծխան բառը այս (ահկի) իմաստով գործածուած ենք գտնում բժշկագիտության պատմության համար մեծ արժէք ներկայացնող «Ասկղեպիադեայ վասն չորից բնության մարդոյ...» թարգմանական ձեռագիր աշխատության մէջ:

զ. Վիպական հատուածի առաջին երկու տողերում («Ո տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի») մահամերձ Արտաշէս Ա-ն, հաւանաբար երազել է ահկի-ծխան եւ նաւասարդ ամիսներին կատարուող տօնախմբությունները (որոնք նոյնպէս առնչուած են եղել երկնային չար ուժերի՝ վիշապների դէմ մարտնչող մի աստուածության պաշտամունքի հետ), իսկ յաջորդ տողերում այդ տօնախմբությունների հետ կապ ունեցող եղնիկների ու եղջերուների որսերը, որոնց ժամանակ թագաւորն ստանձնում էր ծիսական որսի արարողապետի պաշտօնը»:

Այս եզրակացությունների դէմ կան մի շարք առարկություններ. նայենք ըստ կէտերի:

ա. Այստեղ հիմք է ընդունուած Մագիստրոսի նամակաւոր կազմողի կամ խմբագրի դրած վերնագիրը, որի համար, ինչպէս վերեւում տեսանք, լուրջ հիմք չկայ:

բ. Հիմնականում ընդունելի է, բացի այն, որ նամակի գրութեան առիթ է համարում «ա» կէտում նշուածը՝ ըստ վերնագրի:

գ. Լիովին ճիշդ է:

դ. Ճիշդ է, որ «ծուխ ծխանի»-ն չի նշանակում ծխնելոյզներից ելնող ծուխ, բայց անհամոզիչ է ծխան=ահեկան հաւասարութիւնը, առաւել եւս՝ ահեկան=յունուար նոյնացումը, եւ ըստ այդմ «Ով կը տար ինձ ահկի (ծխանի=յունուար) ամսուայ ծուխը» թարգմանութիւնը: Այս նոյնացման համար հիմք է ընդունուած մի աշխատութեան թարգմանութեան մէջ միայն մի անգամ օգտագործուած բառը: Խաչիկեանի յօդուածից պարզ չի հասկացւում, արդեօ՞ք այդ աշխատութեան բոլոր գրչագրերում է առկայ ծխան=ահեկան զուգադրումը, թէ՞ դա փաստուած է միայն մի գրչագիր օրինակով (չի տրուած նոյնիսկ օգտագործուած գրչագրի համարը): Այնպէս որ, այստեղ չի բացառւում նոյնիսկ գրչական վրիպակը, կամ աղաւաղումը (կամ մի այլ կարգի գրչական թիւրիմացութիւն): Դատելով այս զուգադրման եզակիութիւնից, այն աւելի շուտ թիւրիմացութիւն է, քան օրինաչափութիւն, (տոմարի հետ առնչուող որեւէ աշխատութիւնից առայժմ նման անուն (ծխանի ամիս) եւ նման զուգադրում յայտնի չէ): Գալով ահեկան=յունուար նոյնացմանը, սրա համար հիմք է ընդունուել այն ենթադրութիւնը, թէ խնդրոյ առարկայ ժամանակներում Հայոց մօտ եղել է կրօնական անշարժ տոմար նաւասարդի Ա=մարտի ԻԲ (գարնանամուտ) տարեմուտով, որով և ահեկանը կ'ընկնէր դեկտեմբեր-յունուար ամիսներին: Սակայն յայտնի է, որ անշարժ ամիսներով հայկական օրացոյց մուծել է Յովհ. Սարկաւագը ԺԱ դարում, իսկ մինչ այդ նման բան չի եղել: Դրանից առաջ անշարժ օրացոյց ստեղծելու մի փորձ էլ արել է Անանիա Շիրակացին Է դարում, որ սակայն պաշտօնապէս չի ընդունուել: Ամեն դէպքում, այս երկուսն էլ ժամանակով (Է դար և ԺԱ դար) շատ հեռու են Արտաշէս արքայից: Այդուհանդերձ, եթէ հիմք ընդունենք Սարկաւագադիր տոմարը (ենթադրելով, որ Յովհ. Սարկաւագը վերականգնել է մի ինչ որ հին անշարժ տոմար) այս դէպքում էլ ահեկանը ոչ թէ ձմռանն է ընկնում, այլ ապրիլ-մայիս ամիսներին: Բացի այդ նկատենք նաեւ, որ ծխանի բառի այս մեկնութեամբ վիպական հատուածը դառնում է չտրամաբանուած. ի՞նչ ծխի մասին է խօսքը, թէկուզ որ ամսուայ ծուխն էլ դա լինի, ինչո՞ւ է Արտաշէս արքան տենչում մի ինչ որ ամսուայ ծուխը:

ե. Լ. Խաչիկեանի վկայակոչած ձեռագիր աշխատութեան մէջ սոսկ մի անգամ (որքան որ հասկանալի է Խաչիկեանի յօդուածից) ահեկան ամսանուան փոխարէն գործածուած է «ծխանի ամիս» արտայայտութիւնը: Նախ նկատենք, որ այստեղ հաւասարութիւնը այնքան էլ պարզ չէ. ունենք ոչ թէ **ահեկան=ծխանի,** այլ՝ **ահեկան=ծխանի ամիս:** Ըստ այսմ պարտադիր չէ, որ «ծխանի» բառը նշանակի ահեկան: Այն կարող է կիրառուած լինել այլ իմաստով (օրինակ՝ ձմեռնամուտ, արեւադարձ կամ ձմռան սկիզբը նշող մի արտայայտութիւն, քանի որ բերուած օրինակում ահեկանը ձմռան առաջին ամսի իմաստ ունի): Վկայակոչուած շարադրանքում «ահեկի և այլ բ ամիսքն» արտայայտութեան փոխարէն գրուած է եղել «ծխանի ամիսն եւ այլ բ ամիսքն», մինչդեռ, ելնելով շարադրանքի միակերպութիւնից, սպասելի էր, որ լինի «ծխանի եւ այլ բ ամիսքն»: Սա նշանակում է, որ կամ արտագրող գրչի, կամ էլ թարգմանիչի ունեցած մայր օրինակի սոյն տեղում եղել է այնպիսի մի բան (անընթեռնելի, անհասկանալի) որ առիթ է տուել պարզ ամսանուան փոխարէն երկու բառ գրելու, շարադրանքի միա-

կերպութիւնը խախտելու: Չի բացառուում, որ սոյն տեղում «ծխանի» բառը մի այլ բառի աղաւաղումն է, ինչպէս օրինակ՝ ձմերան-ձմռան, կամ էլ աղուանական ծախուլի-ծախուլէն ամսանուան[7]: Նկատենք, որ այստեղ կայ մի այլ անորոշութիւն եւս: Ըստ վկայաբերուած շարադրանքի, գարնան ամիսներն են հրոտից, նաւասարդի, հոռի: Ուրեմն, հրոտից Ա=մարտի 20-ից մինչեւ փետրուարի 19-ը (որ գարնանամուտը՝ մարտի 20-ը ընկնի հրոտից ամսի մէջ): Հայկական որեւէ անշարժ տոմար նման ամսակարգով յայտնի չէ: Իսկ Հայոց շարժական օրացոյցով այսպիսի զուգադրութիւն եղել է 864—984 թթ. ընթացքում, երբ հրոտից Ա-ը համընկել է փետրուարի 19-ից մարտի 20 միջակայքի օրերին: Ուստի, Ասկղեպիադէսի նշուած աշխատութիւնն էլ պէտք է հայերէն թարգմանուած լինի 864—984 թթ. միջակայքում, թէպէտ՝ ըստ Լ. Խաչիկեանի, այս աշխատութիւնը յունաբան դպրոցի թարգմանութիւն է, կատարուած՝ ոչ ուշ Է դարից:

զ. Նախ համառօտ նայենք, թէ ինչ ճանապարհով է Լ. Խաչիկեանը եկել այս եզրակացութեան: Հիմք ընդունելով նամակի վերնագիրը, որոշուել է, որ նամակի սկզբում խօսքը աւեկան ամսին եղած ամպրոպային մի դէպքի մասին է: Ապա հիմք ընդունելով վերեւում քննարկուած ձեռագիր աշխատութեան մէջ աւեկան=ծխանի ամիս զուգադրութիւնը, վիպական հատուածի «ծուխ ծխանի» արտայայտութիւնը բացատրուել է «աւկի (ծխանի=յունուար) ամսուայ ծուխը»: Հիմնուելով այս երկու եզրակացութիւնների վրայ, աւեկան ամսին եղած ամպրոպի եւ Արտաշէսի փափագած աւեկան ամսի ծուխի միջոցով տրամաբանական կապ է ստեղծուել նամակի եւ վիպական հատուածի միջեւ, որով եւ «հիմնաւորուել» է վիպական հատուածի ներմուծումը նամակի մէջ: Ինչպէս վերեւում տեսանք, եզրակացութիւնների այս մասը հիմնաւոր չէ: Նախ, տոմարական մասի վերծանութեան արդիւնքն է անհիմն (աւեկան 23), եւ բացի այդ, նոյնիսկ դա ճիշդ համարելու դէպքում էլ այդ ամսաթիւը «կապւում» է ոչ թէ նամակի սկզբնամասի հետ (ուր, ինչպէս տեսանք, որեւէ ամպրոպային իրադարձութիւն չկայ), այլ առաւելագոյնը՝ նամակի խորագրի հետ, որը, սակայն, տեսանք որ հեղինակային չէ: Այդուհանդերձ, ելնելով նաւասարդ բառի յիշատակումից, Լ. Խաչիկեանը միանգամայն ճիշդ կռահել է, որ Արտաշէսի տենչացածը կապ ունի Նաւասարդեան տօնակատարութեան հետ, եւ դրա հետ է կապել նաեւ նամակի սկզբում յիշատակուած դիցաբանական-ռասպելական տեսարանները: Վիպական հատուածի եւ նամակի սկզբնամասի (աւելի ստոյգ՝ վերնագրի) կապը (այսինքն՝ ծխանի=աւեկան=յունուարի եւ ամպրոպային դիցաբանա-ռասպելական տեսարանի) հիմնաւորելու համար Լ. Խաչիկեանը, որպէս ձմեռային յունուարեան ծէսի օրինակ վկայակոչում է Բորչալու գաւառում հայոց մօտ պահպանուած ծէսերը, որ կատարուել են դեկտեմբերի վերջին—յունուարի սկզբին եւ աղերսուել են ամպրոպային աստուածութեան պաշտամունքի հետ: Նկատենք, որ այս գեղեցիկ ծէսերը պարզապէս բեկորներն են Հայոց Նաւասարդեան մեծ տօնի հետ կապուած ծաւալուն ծիսակատարումների, որ քրիստոնէութեան պայմաններում կտրուելով ամբողջութիւնից, Հայաստանի տարբեր գաւառներում զուգադրուել են տարբեր հին ու նոր տօների, տուեալ դէպքում՝ եւրոպական տարեմուտին՝ յունուարի մէկին: Այսինքն, բերուած ազգագրական օրինակն էլ պիտանի չէ վիպական հատուա-

[7] Տես Անանիա Ծիրակացու մատենագրութիւնը, էջ 118, Երեւան, 1944, նաեւ. Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, էջ 80, 165, Երեւան, 1956:

ծի ծխանի-ահկի-յունուարը նամակի վերնագրի ամպրոպային պատկերին շաղկապելու համար:

Այսպիսով, ծխանի=ահեկան հաւասարութեան միջոցով նամակի եւ վիպական հատուածի կապը հիմնաւորուած չէ: Այդուհանդերձ արժանին մատուցելով անուանի հայագէտին, շեշտենք, որ չնայած նշուած սխալին, լիովին ճիշդ է Լ. Խաչիկեանի այն կռահումը, որ վիպական հատուածում Արտաշէս արքան խօսում է Նաւասարդեան տօնի մասին:

* *
*

Նամակի վերծանումը: Ինչպէս արդեն նշուեց, նամակը շարադրուած է շատ խրթին ոճով եւ դրա ճշգրիտ թարգմանութիւնը կապուած է լեզուական լուրջ դժուարութիւնների հետ, ուստի, շրջանցելով ճշգրիտ թարգմանութեան խնդիրը, փորձենք վերծանել այն: Նախ կատարենք լիովին ընդունելի երկու ենթադրութիւն. ընդունենք, որ նամակը մեզ է հասել առանց էական խեղումների (նրանից հատուածներ բաց չեն թողնուած եւ ոչ էլ կան յետսամուտ հատուածներ): Ընդունենք նաեւ, որ նամակը շարադրուել է, որպէս տրամաբանական մէկ ամբողջութիւն եւ ըստ այդմ նրա բոլոր մասերը պիտի տրամաբանօրէն շաղկապուած լինեն իրար հետ: Մեր գործը դիւրացնելու համար պայմանականօրէն նամակը բաժանենք չորս մասի: Առաջինը՝ սկզբից (առանց վերնագրի) մինչեւ «քաղուն» բառը, երկրորդը՝ «ուրեմն նահանջեալ»-ից մինչեւ «Ահկեան» բառը, երրորդը՝ «որում Արտաշէսն»-ից մինչեւ «քաղաքաց», չորրորդ՝ «Ո տայր»-ից մինչեւ վերջ: Նկատենք նաեւ, որ առկայ կէտադրութիւնը (այդ թւում նաեւ՝ բաժանումը ըստ նախադասութիւնների) մեծապէս կամայական է, արուած ըստ հասկացուած իմաստի, կէտադրական նոր կանոնների համաձայն: Արդ, զանց առնելով առանձին բառերի եւ առանձին մասերի ճշգրիտ թարգմանութեան հարցը, ջանանք հասկանալ դրանց մօտաւոր իմաստը, միեւնոյն ժամանակ, ըստ կարելոյն ճշգրտենք մասերի իմաստների տրամաբանական կապը և այդ կերպ հասկանանք ամբողջ նամակի իմաստը: Նախ փորձենք այն մօտաւոր կերպով վերածել աշխարհաբարի: Ըստ իս, կարելի է նամակը աշխարհաբար վերաշարադրել յետեւեալ կերպ:

«Կամենում ենք իմանալ.
պառաւած, ծայրագոյն ծերունու պէս տարտամացած Զիածինը մեղմացած՝ թխացնում է մազերը, իգական ձեւի բերելով իր թշուառութիւնը. թէրեւս եւ Արէսը՝ թուլացնելով մորուսաւոր յոգնայածուկ (վազվզող) Մակավազեանին, դորիական տաւարի է յեղափոխում (փոխակերպում), որ երեկոյեան (կամ՝ Գիշերավարի, Գիշերավարին յատուկ) գոռման ճայթիւնն է եւ պայթած այծի վրնջոցի խխնջիւնը [եւ] ալախութման (՞) Քաղի լալաւորութիւնը (՞): Ուրեմն, եւ, շարժուելով ամենուից, ցուցակութիւնը (աղերսոյթ նշանը, յայտնութիւնը), երեւան էր հանում (ցոյց էր տալիս) նշանակեալ (ծանուցուած, ակնարկուած) Նիսանը: Եւ այդ կողմից՝ տասնապատիկ եօթնանկիւնի՝ յունական թուին, կամ եթէ հնչեականով՝ ահեկանին եռակի գումարած երեք եօթնանկիւնների, որի, մէջով մրրկուած, շէներին և քաղաքներին հանապարապէս շամանդաղացած ծխին էր տեսնում Արտաշէս Պարթեւը.

Ո տայր ինձ (ասում էր) զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,

զՎազելն եղանց եւ զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է թագաւորաց:

Եւ սա ասել է մահանալուց, որ եւ շինականների մէջ աւանդուած գըտանք. ողջ եղիր»:

Նամակը սկսում է «կամիմք իմանալ»—կամենում ենք իմանալ խօսքով: Ի՞նչ է ուզում հեղինակն իմանալ: Ըստ Լ. Խաչիկեանի մեկնութեան, նամակագրի կամեցածը նախորդ օրուայ մթնոլորտային երեւոյթներին դիցաբանական-առասպելական բացատրութիւն տալն է: Այս մեկնութեամբ շատ հարցեր մնում են բաց. օրինակ՝ ինչո՞ւ է կամենում այդպիսի բացատրութիւն տալ, կամ որպէս ի՞նչ է տալիս այդ բացատրութիւնը եւ այլն: Այդուհանդերձ, շրջանցելով այս բացատրութեան քննարկումը, նկատենք, որ դա միակը չէ: Ըստ իս, այս խօսքը վերաբերում է **ամբողջ** նամակին, այնպէս որ դրան կ'անդրադառնանք փոքր ինչ յետոյ: Ուրեմն, առայժմ զանց առնենք «կամիմք իմանալ» բառերը: Այդ կերպ, առաջին հատուածի իմաստը այն է, որ երեկոյեան (կամ Գիշերավարի)[8] ինչ որ գոռգոռոց է ճայթում, լսում է ինչ որ պայթած այծի վրնջում, խխնջիւն եւ Քաղի հետ կապուած էլի ինչ որ բաներ. եւ այս պատկերը զուգադրում է դիցաբանական-առասպելական ուրիշ էակների գործողութիւններին. յոգնած, պառաւած Ձիածինը կերպարանափոխւում է, իգական կերպարանք ընդունում, Արէսը, թէրեւս մարտնչելով, յաղթում, թուլացնում է Մակավազեանին եւ նրան դարձնում դորիական տաւար:

Երկրորդ մասը օրացուցային հաշուարկն է, որ երկու (նոյնիսկ երեք) տարբեր ձեւերով նշում է մի որոշակի օր: Ի դէպ, բնաւ պարտադիր չէ, որ այդ օրը լինի հենց նամակի գրութեան օրը կամ տեղի ունեցած մի ինչ որ իրադարձութեան օր:

Ամենակարճ՝ երրորդ մասը կապն է նախընթաց երկու մասերի եւ վիպական հատուածի միջեւ:

Վերջին՝ չորրորդ մասը կարծես թէ ամենահասկանալին է: Դրա քննութիւնը առայժմ թողնենք:

---

[8] Բնագրի «երեկեան» բառը Հայկազեան բառարանը դնում է «երիկեան» (=նախորդ օրուայ) բառի հետ իբր ռամկօրէն: Միեւնոյն ժամանակ նոյն բառարանում «երեկ» բառը ունի այսպիսի իմաստներ. իրիկուն, արեւմուտք, Գիշերավար աստղ ընդ երեկոյ երեւեալ: «Երեկեան»-ը «երիկեան»-ի ռամկական տարբերակը համարելուց զատ կարելի է համարել նաեւ «Գիշերավար»+եան=գիշերավարին յատուկ, գիշերավարի, որով հատուածի իմաստը լիովին համապատասխան է նամակի առաջին հատուածի իմաստին, քանի որ Գիշերավարը բացի երեկոյեան երեւացող Արուսեակ մոլորակից միջնադարեան հայ իրականութեան մէջ նշանակել է նաեւ խաւարի, չարի ուժերի մարմնացում, սադայէլ, կամ շարժան է, որ Երեմիա Մեղրեցու անուամբ մեզ հասած «Բառգիրք Հայոց» բառարանում Գիշերավարը նոյնացուած է Լուսնթագ մոլորակի հետ, իսկ Սբ Գրքի թարգմանութեան մէջ (Յոբ, Թ, 9) հայերէն Գիշերավարի դիմաց ունենք յունարէն Esperon (որ տառացիօրէն նոյնն է) եւ լատիներէն Orion: Իսկ Orion համաստեղութիւնը, ինչպէս գիտենք, համարժէք է հայերէն Հայկն աստեղատանը: Այսինքն, Գիշերավար բառը հնում նշանակած է եղել կամ Հայկն աստուածութիւնը եւ համաստեղութիւնը, կամ էլ Լուսնթագ մոլորակը, կամ էլ եւ մէկը եւ միւսը: Ըստ այսմ, լիովին բնական է, որ հեթանոսական դրական աստուածութիւնը քրիստոնէական միջավայրում վերաիմաստաւորուել է եւ դարձել իր նախնականի հակառակը՝ չարի բացասականի մարմնաւորում:

Արդ գանք առաջին երկու բառերին՝ կամիմք իմանալ: Ինչի՞ն է սա վերաբերում: Եթէ դա վերաբերէր միայն առաջին հատուածին («ուզում ենք այսինչը այնպէս հասկանալ» իմաստով), ապա անհասկանալի է մնում երկրորդ եւ երրորդ մասերի կապը: «Որում»-ը այս դէպքում կը վերաբերի «ահեկան»-ին, եւ անհրաժէշտ կը լինի զարտուղի կապեր գտնել ահեկանը ծխի, մլի, շէնների և Արտաշէսի բաղձանքի հետ տրամաբանօրէն կապելու համար (հենց այս ճանապարհով էլ գնացել էր Լ. Խաչիկեանը): Ըստ իս, «կամիմք իմանալ»-ը վերաբերում է առաջին եւ երկրորդ մասերին միասին եւ առաւելաբար՝ երկրորդին: Առաջին մասում նամակագիրն ինքը նկարագրում է ինչ որ իրադարձութիւններ, պատմում է ինչ որ պատմութիւն: Եթէ ընդունենք, որ «կամիմք իմանալ»-ը վերաբերում է միայն առաջին մասին, ապա ստացւում է, որ հեղինակը ուզում է իմանալ իր իսկ պատմածը: Սա հնարաւոր է միայն մի դէպքում. եթէ պատմուածը ունի ծածուկ իմաստ, այսինքն՝ հանելուկ է: Այս միակ տարբերակը կը քննենք ստորեւ, իսկ հիմա նկատենք, որ այս դէպքում անհասկանալի է դառնում նամակի երկրորդ, երրորդ եւ չորրորդ մասերի դերը. դրա՞նք որպէս ինչ են բերուած: Այնպէս, որ **միայն** առաջին մասին վերաբերել «կամիմք իմանալ»-ը չէր կարող: Գալով երկրորդ մասին, սա մի փոքրիկ տոմարական հանելուկ է, որ պէտք է լուծել, իմանալու համար, թէ ինչ ամիս-ամսաթիւ է դա ցուցանում: Նամակագիրն այստեղ հանելուկ է առաջադրում. իսկ հանելուկ առաջադրողը, որպէս, կանոն, կամենում է իմանալ և դրա լուծումը, պատասխանը: Եթէ «կամիմք իմանալ»-ը վերաբերի երկրորդ մասին՝ տոմարական հանելուկին, այս դէպքում արդեն երրորդ մասը (նախ եւ առաջ «որում»=որին դերանունը) արդեն կը վերաբերի ոչ թէ ահեկանին, այլ այն ամսաթուին, որ թաքնուած է հանելուկում:

Այսպիսով, նամակն ամբողջութեամբ կ'ընկալուի յետեւեալ կերպ. դիցական-առասպելական էակների ինչ-ինչ գործողութիւններ, որ տեղի են ունենում երեկոյեան, կամ (որ շատ աւելի հաւանական է) Գիշերավարի մասնակցութեամբ, ապա յաջորդում է ծածկագրուած ամսաթիւը ցոյց տուող տոմարական հանելուկը, ամսաթուի փոխարէն, որի (այդ անյայտ ամսաթուի) մլով մրրկուած... ծխին էր տենչում Արտաշէս Պարթեւը, ասելով. «Ո տայր ինձ...»: Այս ամենի մէջ վերջնական պարզութիւն մտցնելու համար հարկ է լուծել տոմարական հանելուկը:

*
* *

Տոմարական հանելուկը: Նամակի այս հատուածը կազմուած է երկու մասից: Առաջին մասում ամսաթիւը ցոյց է տրուած ոչ հայկական մի օրամասից: Լ. Խաչիկեանը ենթադրաբար դա համարել է եբրայականը, թէրեւս ցոյցով: Հիմք ընդունելով եբրայական նիսան ամսանուան առկայութիւնը: Սակայն նամակագիրն ինքը յստակ ասում է, որ պէտք է գործ ունենալ յունական տոմարի հետ («յունականին թուոյ»), իսկ նիսանը այստեղ յիշատակուած է ոչ թէ որպէս հաշուարկման ելակէտ, այլ միայն իբրեւ օժանդակ ուղեցոյց: Որպէս հաշուարկի ելակէտ բերուած է **ամնոս** ամսանունը: Այս անունը, ամենայն հաւանականութեամբ, աղաւաղումն է մի այլ ամսանուան, քանի որ ոչ Անանիա Ծիրակացու, ոչ էլ Յովհաննէս Սարկաւագի յայտնի տոմարական աշխատութիւններում այդպիսի անուն հնարաւոր չեղաւ գտնել տարբեր ազգերի ամսանունների ցուցակներից ոչ մէկում: Միեւնոյն ժամանակ, յունական

կան տոմարում յիշատակում է **պանեմոս** կամ **պանէմուս** (Սարկաւագ, էջ 81, 168) կամ **պէնիմոս** (Շիրակացի, էջ 119) ամսանունը: Ամենահարմարը, աղաւաղուելով **ամնոս** դառնալու համար, **պանեմոս** ձեւն է, եւ քանի որ դրրան քիչ թէ շատ նման որեւէ այլ ամսանուն յայտնի չէ, ուրեմն ընդունենք, որ նամակում նախապէս եղել է «ի պանեմոսէ», որ խեղաթիւրուելով դարձել է «ի պանեմոսէ- յանեմոսէ- յամնոսէ»: Յունական պանեմոս ամիսը համարժէք է հռոմէական մայիսին: Հանելուկից պարզ է, որ պանեմոսից պէտք է եւ շարժուել, այսինքն՝ եղընթաց հաշուարկ կատարել: Փոքր ինչ խրթին ձեւով Գր. Մագիստրոսը յայտնում է, թէ ինչ թիւ (քանի օր) պէտք է հանել (եւ հաշուարկել) պանեմոսից (մայիսից): Դա կը քննենք քիչ յետոյ: Հանելուկի միւս մասում նոյն օրը ցոյց է տրւում հայկական օրացոյցով: Այստեղ Հաշուարկը պիտի կատարուի աւելեկան ամսից: Ի դէպ, նախորդ յետազօտողները ընդունել են, որ խնդրոյ առարկայ ամսաթիւը անպայման աւելեկան ամսին է: Մինչդեռ աւելեկանը այստեղ միմիայն հաշուարկի ելակէտ է, եւ ոչ աւելի: Հանելուկը լուծելու համար հարկ է գտնել նամակագրի կողմից միտումնաւոր ծածուկ ասուած օրերի քանակները, որ գումարելով աւելեկանին եւ հանելով պանեմոսից, ստանանք միեւնոյն ամսաթիւը: Ուրեմն, փորձենք հասկանալ այդ թուերը:

Նամականու կազմողը կամ խմբագիրը «երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց»-ը հասկացել է $3\times7+3=24$[9], և դա էլ բերել է յետայա թիւրիմացութիւնների: Բացի այդ, անհասկանալի է մնացել «անկեանց» բառի դերը, որ սոյն մեկնութեան դէպքում դառնում է աւելորդ: Դա հասկանալու համար դիմենք Գր. Մագիստրոսին համարեա ժամանակակից Յովհաննէս Սարկաւագի աշխատութիւններին: Ի թիւս այլ գործերի, մեզ է հասել նրա թուաբանական մի աշխատութիւնը «Յաղագս անկիւնաւոր թուոց» խորագրով (Յովհ. Սարկաւագ, էջ 148)[10]: Սա թուերի տեսութեանը վերաբերող մի աշխատութիւն է, որ հեղինակի հաղորդման համաձայն, գրուել է իբրեւ ուսումնական ձեռնարկ: Այստեղ բերուած են բազմանկիւնի թուերը՝ եռանկիւնուց մինչեւ տասնչորսանկիւնի եւ տասնհինգանկիւնի, թէպէտ, ինչպէս նշում է հենց Սարկաւագ վարդապետը, անկիւնաւոր թուերի «վախճանը» եօթանկիւնին է, իսկ մնացեալը գրուել է «յաղագս կրթութեան մանկանց եւ վարժման յարուեստս»: Բազմանկիւնի (անկիւնաւոր) թուերը տարբեր թուային շարքեր են, հիմնուած՝ համապատասխան երկրաչափական կառուցումների վրայ:

Քննարկուող նամակի խրթին շարադրանքը, հանելուկի առկայութիւնն ու միտումնաւոր ստեղծուած բարդութիւնները յուշում են, որ Գր. Մագիստրոսը իր հանելուկը սարքելուց պէտք է կիրառած լինի հենց այս՝ անկիւնաւոր թուերը: Ուստի փորձենք հանելուկի լուծումը փնտռել այս թուերից օգտուելով:

---

[9] Նամակի խորագրում ամսաթիւը գրուած է «քսաներորդ երրորդ» (23), որ չի համապատասխանում $3\times7+3=24$-ին: Սա հնարաւոր է այն դէպքում, եթէ ընդունենք, որ առկայ է գրչական աղաւաղում: Նախապէս եղել է «ԻԴ» (24), որ ապա դարձել է «ԻԳ» (23) եւ ապա արտագրուել բառերով: Սա ամենատարածուած աղաւաղումներից է (Գ—Դ տառերի նմանութիւնից): Սա նշանակում է նաեւ, որ նախնական բնագրում թուերը գրրուած են եղել տառանիշերով:

[10] Տես նաեւ. **Գար. Պետրոսեան,** Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, Հասարակական գիտութիւններ № 4, էջ 23—41, 1946:

Ահա եռանկիւնի, քառանկիւնի եւ եօթանկիւնի թուերի շարքերը ըստ Սարկաւագ վարդապետի նշուած աշխատութեան.

եռանկիւնի 1, 3, 6, 10, 15, 21, 28, 36, 45, 55,...

քառանկիւնի 1, 4, 9, 16, 25, 36, 49, 64, 81, 100,...

եօթանկիւնի 1, 7, 18, 34, 55, 81, 112, 148, 189, 235,...:

Հանելուկի երկրորդ մասում ասուած է. «երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց ահեկան»—«ահեկանին եռակի գումարած երեք եօթանկիւնիին»:

«Երից եօթն անկեանց»-ը թէրեւս կարելի էր հասկանալ նաեւ (3×7) անկեանց, այսինքն՝ քսանմէկանկեան, սակայն քսանմէկանկիւնի թուեր մեզ յայտնի թուաբանական աշխատութիւններում բնաւ չկան եւ այդ տարբերակը չենք քննարկի: Նկատենք նաեւ, որ մեր գործածելիք թուերը անպայման պէտք է փոքր լինեն տարուայ օրերի թուից՝ 365-ից, եւ դեռ աւելին՝ այդ թուերը չպիտի գերազանցեն ահեկանից մինչեւ պանեմոս (մայիս) եղած օրերի թուին: Ահեկանը հայկական ամիս է, իսկ Հայոց տոմարը, ինչպէս գիտենք, շարժական է, յետեւաբար ահեկանի ամսամուտն էլ կայուն չէ: Գր. Մագիստրոս Պահլաւունին ապրել է 990—1058 թթ.: Համարենք, որ նամակը գրելու ժամանակ նա եղել է առնվազն 25 տարեկան: Այդ դէպքում ահեկանի ամսամուտի համար կ'ունենանք 10 տարբեր արժէքներ.

1016 թ. ահեկան Ա.=նոյեմբերի 12,

1020 թ. ահեկան Ա.=նոյամբերի 11,

. . . . . .

1056 թ. ահեկան Ա.=նոյեմբերի 2:

Ուրեմն ահեկան մէկից մինեւ պանեմոսի (մայիսի) մէկը կ'ունենանք 179—169 օր: Այսինքն, մենք պիտի գործ ունենանք 179-ից փոքր թուերի հետ: Արդ, հարկ է գտնել համապատասխան անկիւնաւոր թուեր, դրանց հետ կատարել նշուած գործողութիւնները եւ գումարելով ահեկին ու հանելով պանեմոսից (մայիսից) ստանալ միեւնոյն ամիս-ամսաթիւը: Պարզւում է, սակայն, որ անկիւնաւոր թուերի յայտնի բոլոր շարքերում չկան մեր խնդրին բաւարարող թուեր: Յետեւաբար, կամ հանելուկի լուծումը անկիւնաւոր թուերով չէ, կամ էլ պիտի գտնել այդ թուերի այլ մեկնութիւն: Դիմենք անկիւնաւոր թուերի երկրաչափական գծագրերին: Ահա եռանկիւնի, քառանկիւնի եւ եօթանկիւնի թուերի երկրաչափական պատկերումները (տես յաջորդ էջը):

Էլի յիշենք Մագիստրոսի խօսքերը. «երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց»: Այս գծագրերը յուշում են, որ հանելուկի խօսքերը կարելի է հասկանալ նաեւ այլ կերպ: Ահա թէ ինչպէս: Անկիւնաւոր թուերը ստացւում են յաջորդաբար իրար վրայ աւելացուող համապատասխան բազմանկիւնիների հանգոյցների գումարից: Աւելացուող բազմանկիւնին նախորդի վրայ է դրւում այնպէս, որ նրանք ունենում են մէկ ընդհանուր գագաթ ու երկու ընդհանուր կողմ (եղածը դառնում է աւելացուողի մասը):

Նայենք, օրինակ, եօթանկիւնի թուերի շարքը: Առաջինը (զանց առնելով մէկը) պարզ կանոնաւոր եօթանկեան գագաթների (հանգոյցների) քանակն է: Երկրորդ թիւը ստացւում է, երբ առաջին եօթանկիւնուն արտաքուստ կցում ենք երկրորդ եօթանկիւնին, որի իրաքանչիւր կողմը նախկինի կողմի կրկնապատիկն է (ունի մի յաւելեալ հանգոյց մէջտեղում): Այս աւելացուած եօթանկիւնին արդեն ունի 14 հանգոյց, բայց առաջին ու երկրորդ բազմանկիւնիները մասամբ վերադրուած են, եւ ընդհանուր պատկերի հանգոյցների գումարը ոչ թէ 7+14=21 է, այլ 7+14—3=18 (3-ը ընդհանուր

Եռանկիւնի



Քառանկիւնի



Եօթանկիւնի



հանգոյցների թիւն է): Ահա 18-ը երկրորդ եօթանկիւնի թիւն է: Յաջորդ եօթանկիւնի թիւն ստանալու համար արդեն եղած պատկերին արտաքուստ աւելացւում է եւս մի եօթանկիւնի, որի կողմն արդեն առաջինի ոչ թէ կրկնապատիկն է, այլ եռապատիկը (պարունակում է ոչ թէ մէկ, այլ երկու յաւելեալ հանգոյց): Սրա հանգոյցների թիւը 21 է (որոնցից 5-ը վերադրւում են նախորդի հանգոյցներին) եւ երրորդ եօթանկիւնի թիւը կը լինի 7+14+ +21—3—5=34: Եւ այսպէս շարունակ: Արդ, Գր. Մագիստրոսի ասածը կարելի է հասկանալ նաեւ այսպէս, որ խօսքը ոչ թէ անկիւնաւոր թուերի մասին է, այլ դրանց երկրաչափական պատկերների: Այս դէպքում պէտք է երեք եօթանկիւնիները եռակի (եռապատիկ) գումարել ահեկանին, եւ կարիք չկայ այդ գումարից հանելու ընդհանուր հանգոյցների թիւը: Այս կերպ ընկալելու դեպքում կ'ստանանք առաջին եօթանկեան անկիւնների թիւը (7)+ երկրորդինը (14)+երրորդինը (21) եւ գումարը վերցրած եռապատիկ: Այսինքն, կը լինի (7+14+21)×3=42×3=126: Ուրեմն ահեկանին պէտք է գումարել 126 օր: Ահեկան մէկին 126 օր գումարելով ստանում ենք նաւասարդ ամսի մէկը, իմա՝ Հայոց շարժական տոմարի տարեմուտը:

Արդ նայենք, կարելի է այդ նոյն ամսաթիւը ստանալ նաեւ յունական տոմարով: Քանի որ Հայոց տոմարը շարժական է, ուրեմն ահեկանի պէս նաւասարդի մէկն էլ է շարժական, եւ վերոյիշեալ թուականներին այն փոփոխուել է յետեւեալ կերպ.

1016 թ. նաւասարդի Ա.=մարտի 17,

1020 թ. նաւասարդի Ա.=մարտի 16,

. . . . . .

1056 թ. նաւասարդի Ա.=մարտի 7:

Մարտի 7—17-ից մինչեւ մայիսի 1-ը 53—43 օր է: Հանելուկի առաջին մասում օրերի թիւը տրւում է այսպէս. «տասնեկին եօթն անկեանցն»— տասնապատիկ եօթանկիւնին: Այսինքն, օրերի թիւը պիտի լինի մի ինչ որ թուի տասնապատիկը: 43—53 թուերի միջակայքում միայն մի թիւ կայ, որ բաժանւում է տասի (մի այլ թուի տասնապատիկն է): Դա է 50-ը: Բայց 50-ն էլ տասնապատիկն է ոչ թէ եօթի (ինչպէս պէտք էր սպասել բնագրից), այլ հինգի: Աւելին, եօթի տասնապատիկը՝ 70-ը մեծ է մեր թոյլատրելի ամենամեծ թուից՝ 53-ից: Այստեղից յետեւում է, որ նամակի այս մասում եւս ունենք գրչական աղաւաղում՝ հինգը փոխարինուել է եօթով: Սա եւս բաւական հաւանական է, քանի որ ամենահաճախ պատահող գրչական աղաւաղումներից է Է եւ Ե տառերի նմանութեան պատճառով: Սա նաեւ նշանակում է, որ նամակի մեզ հասած ձեռագրերի նախօրինակում այս թուերը եւս գրուած են եղել ոչ թէ բառերով, այլ տառանիշերով: Այս անհրաժէշտ շրջանցումով հանելուկի առաջին մասում կը դառնայ. «տասնեկին Ե անկեանցն» (հնգանկեանցն), որ կը տայ 10×5=50: Մայիսի 1—50 օր=մարտի 10: Սա նաւասարդի մէկի համար մեր ունեցած միջակայքի օրերից է, եւ գիտենք, որ նաւասարդի մէկը մարտի 10-ին է հանդիպել 1044—1047 թթ. քառամեակի ընթացքում: Ուրեմն, կարելի է ճշդել նաեւ նամակի գրութեան տարին, որ Է 1044—1047 թթ. տարիներից մէկը:

Լրիւ պարզութեան համար բացատրենք նաեւ նիսան ամսանունան դերը նամակում: Եբրայական նիսանի մէկը՝ մարտի 22-ը, նշուած քառամեակում համապատասխանել է Հայոց նաւասարդի ԺԳ (13)-ին: Այսինքն, նիսանը լրիւ չի համընկնում (նշուած տարիներին) նաւասարդի հետ, բայց եւ ցոյց է տալիս, երեւակում է նաւասարդը: Բացի այդ, եթէ նաւասարդը Հայոց տա-

ռեգլուխն է, ապա նիսանն էլ եբրայական տոմարի տարեգլուխն է, եւ այս իմաստով նիսանը լրիւ զուգահեռ է նաւասարդին: Այնպէս, որ նիսանը որպէս տարեգլուխ լիովին հարմար նշանացոյց է հանելուկի լուծումը յուշելու, բացատրելու համար. եւ բացի այդ էլ նշուած տարիներին կիսով չափ վերադրուել է նաւասարդ ամսին: Ուրեմն, երկու ձեւով էլ նիսանը նամակում յուշողի, նաւասարդի մասին վկայողի դեր է կատարում: Այսպիսով, լուծելով տոմարական հանելուկը, գտնում ենք, որ **Գրիգոր Մագիստրոսի ծածկագրած ամսաթիւը նաւասարդի մէկն է:**

*

* *

Նամակն ու վիպական հատուածը: Տոմարական հանելուկի լուծումով միանգամից պարզւում է նամակի կապը վիպական հատուածի հետ: Այդ կապը ուղղակի է, առանց զարտուղի բացատրութիւնների: Հանելուկով Գր. Մագիստրոսը յայտնում է իր կամեցած ամսաթիւը՝ նաւասարդի մէկը եւ հանելուկի լուծումը դիւրացնելու համար էլ յուշման կարգով մէջ է բերում իր լսած վէպից մի հատուած, ուր եւս խօսւում է այդ նոյն օրուայ մասին: Եթէ նամակի մէջ տոմարական հանելուկի փոխարէն դնենք դրա լուծումը, կը ստանանք այսպիսի պատկեր. դիցա-առասպելական անցքերի նկարագրութիւն, ապա «...նաւասարդի մէկը, որի մլով մրրկուած... ծխին էր տեսնում Արտաշէս Պարթեւը.—Ո տայր ինձ (ասում էր) զծուխ ծխանի, եւ զառաւօտն նաւասարդի...»: Այլեւս հարկ չկայ վիպական հատուածի որոշ բառերի կապակցելի բացատրութիւններով մտացածին, խախուտ կապ ստեղծելու նամակի եւ վիպական հատուածի միջեւ: Կարիք չկայ նաեւ ձմեռային ամպրոպի մասին նամակից չբխող եզրակացութիւն անելու (առաւել եւս, որ ձմռանը ամպրոպ չի լինում):

Այսպիսով, տեսնում ենք, որ նամակի միջնամասը (հանելուկը) եւ վերջնամասը միասին մէկ ամբողջութիւն են: Սա նկատի ունենալով, բնական է ապասել, որ նամակի սկզբնամասը եւս բովանդակութեամբ կապուի, ամբողջանայ սրանց հետ: Այսինքն, ապասելի է, որ սկզբում նկարագրուած դիցական-առասպելական երեւոյթները եւս աղերսներ ունենան Արտաշէսի փափագած Նաւասարդեան առաւօտի հետ: Նաւասարդը Հայոց գլխաւոր տօնն է եղել, եւ բնականաբար դրա հետ պիտի կապուած լինէին շատ մեծ խորհուրդներ: Որպէս սրբազան, տիեզերական խորհուրդով պարուրուած տօնի օր, կարելի է ապասել, որ այդ ժամանակ կատարուէին նաեւ նշուած առասպելական կերպարների ինչ-ինչ գործողութիւններ: Նաւասարդեան գիշերը սրբացուած է եղել, եւ այդ գիշեր կամ նախընթաց երեկոյեան՝ պիտի կատարուէին բարու եւ չարի, կենաց եւ մահու պայքարի եւ բարու, կեանքի յաղթանակի հետ կապուած տիեզերական երեւոյթներ: Յիշենք այս տօնի որոշ տարրեր, որ պահպանուել են Համբարձման ժողովրդական ծէսերի մէջ: Աղջիկները ծաղիկներ են ժողովում, եօթն աղբիւրից ջուր առնում եւ պատրաստում են **վիճակը:** Տղաները փորձում են առեւանգել վիճակը, աղջիկները պաշտպանում են, թաքցնում: Յաջորդ օրը վիճակով գուշակում՝ է՝ ամնձի կեանքը, ապագան, բախտը, յետեւաբար, վիճակը՝ գողանալ-փախցնելու փորձը, որ անում են տղաները, կարելի է դիտել, որպէս կեանքի, բախտի, բեղմնաւորութեան, պտղաբերութեան (վիճակի մէջ՝ ջուր եւ ծաղիկներ) խափանման, արգելման փորձ: Այս ծիսական խաղը, որ պահպանուել է միեւնոյն մեր օրերը, նմանակումը պիտի լինէր այն տիեզերախորհուրդ անցքերի, որ տե-

ղի էին ունենում այդ տօնի օրը ըստ Հայոց դիցական պատկերացումների: Ուրեմն, Նաւասարդեան գիշերը, համաձայն հին Հայոց պատկերացումների պիտի տեղի ունեցած լինէին տիեզերական իրադարձութիւններ. աստուածների եւ դիցական-առասպելական այլեւայլ էակների մարտնչումներ, յաղթանակներ եւ այլն: Քանի որ նամակը նուիրուած է եղել նաւասարդի մէկին (Նաւասարդեան տօնին), եւ Գր. Մագիստրոսն էլ քաջատեղեակ է եղել հին առասպելաբանութեանը եւ մեծ կարեւորութիւն է տուել դրան, ուրեմն կարելի է մտածել, որ հեղինակը նամակի սկզբում նկարագրել է ոչ թէ ինչ որ վերացական, փոխաբերական պատկերներ, այլ վերապատմել է Նաւասարդի տօնի հետ կապուած իր իմացած առասպելները: Այսինքն, նամակի սկզբում նկարագրուած են Նաւասարդի տօնին վերաբերող այն առասպելները, որ իմացել է Գր. Մագիստրոսը:

Արդ, երբ նամակն ու վիպական հատուածը կարողացանք ընկալել որպէս մէկ ամբողջութիւն, նայենք թէ ինչ է իրենից ներկայացնում ամբողջ նամակը: Ինչպէս վերեւում տեսանք, վիպական հատուածը ըստ էութեան տոմարական հանելուկի յաւելուածն է, լրացումը (որ կոչուած է դրա լուծումը յուշելու, դիւրացնելու): Նման դեր ունի նաեւ նամակի սկզբնամասը՝ դիցա-առասպելական նկարագրութիւնը: Այսինքն՝ նամակը կազմուած է մի տոմարական հանելուկից եւ սկզբից ու վերջից դրան կցուած բացատրութիւն-լրացումներից: Ստացւում է, որ նամակն ամբողջութեամբ մի հանելուկ է, ուր նամակագիրը երեք տարբեր ձեւերով նշում է միեւնոյն օրը, որ պէտք է գտնել, նախ առասպելաբանութեամբ (վկայաբերելով այդ օրուայ տօնի հետ կապուած դիցաբանական-առասպելական պատմութիւնները), ապա տոմարական խրթին հաշուարկներով եւ վերջում էլ այդ նոյն օրուան վերաբերող վիպական մի հատուածով: Այս բացատրութեամբ լրիւ հասկանալի է դառնում նամակի սկիզբը՝ «կամիմք իմանալ» խօսքով: Կարիք չկայ դրանց էլ կողմնակի իմաստ տալու: Դրանք այստեղ ունեն իրենց ամենաուղղակի իմաստը՝ ուզում ենք իմանալ, եւ ոչ թէ՝ ուզում ենք «այսինչը» հասկանալ որպէս «այնինչ»: Հասկանալի է դառնում նաեւ նամակի ընդգծուած խրթին ոճը, որպէս հանելուկ շարադրելու ձեւ: Նամակի այսպիսի ընկալման հիմնաւորումն ամբողջացնելու համար հարկ է նաեւ բացատրել, թէ որն է այսպիսի նամակի գրութեան իմաստը: Ցարդ ինձ յայտնի գրականութեան մէջ բերուած կարծիքն այն է, թէ Գր. Մագիստրոսը տարբեր առիթներով ջանացել է ցուցադրել իր գիտութիւնը եւ եղած արտառոց ամպրոպն էլ այդպիսի մի հերթական առիթ է եղել[11]: Անշուշտ, այստեղ ճշմարտութիւն կայ, բայց էլի անհասկանալի է, թէ ինչն էր մղում Գր. Մագիստրոսին հենց այնպէս նամակ գրել միմիայն իր գիտութիւնը ցուցադրելու համար: Առանց պատշաճ բացատրութեան սա կը նշանակի Պահլաւունեաց մեծ իշխանին վերագրել բաւական արտառոց ցուցամոլութիւն եւ փառասիրութիւն: Փնտռենք այլ բացատրութիւն: Պատմութիւնից գիտենք, որ հին աշխարհում ընդունուած է եղել իմաստունների միջեւ մրցութիւններ անցկացնելը, որտեղ իմաստուններն իրար առաջադրել են խրթին հանելուկներ (օրինակ՝ Եգիպտոսի հետ կապուած պատմութիւնները): Այս աւանդոյթը յարատեւել է նաեւ միջնադարում: Այս նոյն իրողութեան վերապրուկն է հայ իրականութեան մէջ մինչեւ անցեալ դարը պահպանուած աշուղների մրցոյթները, որտեղ եւս ա-

[11] Տես **Լ. Խաչիկեան**, նշ. աշխ., էջ 413:

ռաջադրուել են հանելուկներ: Բնականաբար, սպասելի է, որ հանելուկներով իմաստութեան, գիտութեան մրցութիւններ եղած լինեն նաեւ Մագիստրոսի ժամանակներում եւ Պահլաւունի իշխանն էլ, որպէս իր ժամանակի երեւելի գիտուն անձ, մասնակցած լինի դրանց: Ահա, խնդրոյ առարկայ նամակը կարելի է դիտել, որպէս մի այդպիսի մրցութեան ժամանակ առաջադրուած հանելուկ-առաջադրանք, որ Գրիգոր Պահլաւունին տուել է իր մրցակցին[12]:

* *
*

Վիպական հատուածի քննութիւնը: Նամակի քննութիւնից իմացանք, որ վիպական հատուածը մէջ է բերուել, որպէս նաւասարդի մէկի մասին յուշող վկայութիւն: Աւելին, պարզուեց, որ Գր. Մագիստրոսը, որ ամենայն հաւանականութեամբ լսել է վէպը ամբողջութեամբ (կամ՝ առնուազն, աւելի ընդարձակ, քան իր արած մէջբերումն է) իմացել է, որ Նաւասարդեան տոնի (աւելի ստոյգ՝ նաւասարդի մէկի) հետ կապուած են եղել դիցական-առասպելական էակների ինչ-ինչ գործողութիւններ: Արդ, իմանալով սա, փորձենք հասկանալ վիպական հատուածը:

Ինչպէս Մագիստրոսն է վկայում, բերուած խօսքերը, ըստ վէպի, Արտաշէս արքան ասել է մահանալուց: Ի՞նչ են դրանք նշանակում: Մահամերձ թագաւորը յայտնում է իր վերջին իղձը, նա ուզում է ինչ որ բաներ: Թագաւորի ուզածները չորսն են. ծուխ ծխանի, առաւօտն նաւասարդի, վազելն եղանց եւ վագելն եղջերուաց: Ալիշանը, Էմինը եւ Խալաթեանցը սրանք հասկացել են բանաստեղծական առումով: Լ. Խաչիկեանը իրաւացիօրէն առարկելով նրանց, բաւական ընդարձակ բացատրութիւն է տալիս վերջին երկուսին, մեկնելով դրանք, որպէս ակնարկ ծիսական որսի մասին, որի արարողապետը պիտի լինէր ինքը՝ թագաւորը: Սակայն առաջին երկուսը մնում են չբացատրուած. ծխանի ծուխն ու նաւասարդի առաւօտը: Ի՞նչ ծուխ եւ ի՞նչ առաւօտ են դրանք: Ինչպէս շատ դիպուկ նշում է Խաչիկեանը, «դարերի ընթացքում ձեւաւորուած ու հղկուած ժողովրդական վէպի մէջ անտրամաբանական կեցութիւններ ենթադրելու հիմք չունենք»: Ուրեմն, հարկ է այս երկուսին էլ տալ միանգամայն յստակ ու տրամաբանական բացատրութիւն: Թիւրիմացութիւնը սկսուել է նրանից, որ այստեղ ծխան եւ առաւօտ բառերը ընկալուել են այս օրուայ սովորական իմաստով. ծխանը նոյնացուել է ծխահանք (ծխնելոյզ) բառի հետ, իսկ առաւօտն էլ ընկալուել է, որպէս ցերեկուայ սկզբի մասը: Այնինչ այս երկու բառերն էլ հայերէնում ունեն նաեւ այլ իմաստներ:

Սկսենք երկրորդից. առաւօտն նաւասարդի: Անանիա Շիրակացուց մեզ հասած աշխատութիւնների մէջ պահպանուել են հին Հայոց օգտագործած ցերեկային եւ գիշերային ժամերի անունները[13]: Ըստ մեզ հասած այս անունների ցանկերի, գիշերուայ տասներորդ ժամը կոչուել է **Առաւօտ:** Պարզաբանենք սա: Օրը, ըստ հին Հայոց, բաժանուել է երկու մասի. ցերեկ (արեւածագից մինչեւ մայրամուտ) եւ գիշեր (մայրամուտից մինչեւ արեւածագ): Այս երկու մասերն իրենց հերթին բաժանուել են տասներկուական ժամերի, որոնցից իւրաքանչիւրը ունեցել է իր յատուկ անունը: Այս ժամերի տեւողութիւնները կայուն չեն եղել: Բնականաբար, ամառը երկարատեւ են ե-

---

[12] Հնարաւոր է, որ Մագիստրոսի նամակաւոր մէջ գտնուեն նման առիթներով գրուած այլ նամակներ եւս:

[13] Տես **Անանիա Շիրակացի,** նշ. աշխ., էջ 113:

ղել ցերեկային ժամերը եւ կարճատեւ՝ գիշերայիններրը, ձմեռն էլ հակառակը: Օրինակ. ամառնամուտին գիշերային ժամերից իւրաքանչիւրի տեւողութիւնը (ժամանակաչափման արդի միաւորներով) կը լինէր 45 րոպէ, իսկ նոյն օրուայ ցերեկային ժամինը՝ 75 րոպէ: Առաւօտ բառին տալով իր այս (ըստ իս՝ բուն, նախնական) իմաստը, Արտաշէս արքայի բաղձանքը դառնում է լիովին հասկանալի: Ինչպէս ցոյց է տրուած եղել շարքիս նախորդ յօդուածում[14], Հայոց Բուն օրացոյցում բացառիկ կարեւորութիւն է ունեցել Հայկն համաստեղութեան արեգակնային ամբարձումը (չերեւալու շրջանից յետոյ առաջին անգամ Արեգակից առաջ ծագելը), որ Հայոց Բուն տոմարի սկզբնաւորման շրջանում (ն. Ք. 2341 թ.) Հայաստանի տարածքից դիտուել է ամառնամուտից մի շաբաթ առաջ (յունիսի 14-ին ըստ մեր այսօրուայ օրացոյցի): Արեգակնային ամբարձման ճիշդ ժամանակը հաշուարկելուց ընդունուել էր, որ աստղի ծագման պահին պէտք է Արեգակը **առնուազն** 15° վար լինէր հորիզոնից: Սա նշանակում է, որ աստղի ծագումը կը լինէր արեւածագից առնուազն 63 րոպէ առաջ: Այսինքն, ամառնամուտի կարճատեւ գիշերային ժամերի պայմաններում սա կը լինէր գիշերուայ **ամենաուշը** 11-րդ ժամին: Իսկ աւելի ընդունելի՝ գիշերուայ 10—11-րդ ժամերին: Այսինքն, Հայկի աստղի արեգակնային ամբարձումը Հայոց Բուն օրացոյցի ստեղծման դարաշրջանում Հայաստանի տարածքից դիտուել է մօտաւորապէս գիշերուայ **Առաւօտ** ժամին (կամ դրանից փոքր ինչ անց): Սա նշանակում է, որ Առաւօտը հենց այն ժամն էր, որի ընթացքում տեղի էր ունենում ամբողջ տարուայ ամենամեծ ու սրբազան խորհուրդը: Ուրեմն, բնական կը լինէր սպասել, որ Նաւասարդեան ամբողջ տօնակատարութեան ամենաառանցքային, վճռորոշ պահը լինէր հենց տուեալ օրուայ Առաւօտ ժամը[15]: Բնականաբար հենց այդ ժամին պիտի կատարուէին Նաւասարդեան տօնի հետ կապուած տիեզերական ամենակարեւոր խորհուրդները, բարու յաղթանակը, բախտի վճռուելը, ապագայի որոշուելը եւն: Ըստ այսմ լիովին հասկանալի է մահամերձ Արտաշէս Պարթեւի տենչացած «Առաւօտն Նաւասարդի»: Արտաշէսը մահամերձ էր, իսկ ի՞նչ կարող էր տենչալ մահամերձը: Յիշենք Պետրոս Դուրեանի խօսքը. «եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան. նախ կեանքը, վերջը՝ լացողմ' իր վրան»: Իրօք, աւելին հնարաւոր էլ չէ. մահամերձ արքան նախ կեանք պիտի ուզէր եւ ապա՝ վրան ագացող-լացող, իր փառքը յիշողներ, իրեն փառաբանողներ: Ի դէպ, այս մասին ուղղակի վկայութիւն կայ Խորենացու մօտ, ուր պատմում է, որ հիւանդ Արտաշէսը Աբեղոյ Աբեղեանին հենց վերջինիս առաջարկով առաքում է Երիզայ՝ Արտեմիսի մեհեանը, կուռքերից բժշկութիւն եւ երկար կեանք խնդրելու (Խորենացի, Բ, Կ), սակայն չի դիմանում, մահանում է մինչեւ Աբեղեան իշխանի վերադարձը: Իսկ վերջին շնչում իր պաշտած սրբավարից հեռու ո՞վ կարող էր իրեն կեանք տալ, ումի՞ց կարող էր նա կեանք ուզել: Անշուշտ, իր իմացած ամենազօրաւոր, ամենասուրբ բանից, որ պիտի լինէր կամ Նաւասարդի Առաւօտը, կամ էլ դրա հետ կապուած մի այլ բան: Այսպիսով լիովին հասկանալի

---

[14] Տես **Գրիգոր Բրուտեան,** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Էջմիածին, 1985 թ., Ա, էջ 51—57, եւ Բ—Գ, էջ 72—80:

[15] Ի դէպ, եթէ նկատի առնենք Առաւօտ ժամի այս բացառիկ կարեւոր դերը հին Հայոց պատկերացումների մէջ, լիովին հասկանալի է դառնում այն իրողութիւնը, որ այդ ժամի յատուկ անունը յետագայում իմաստի զարգացում ապրելով վեր է ածուել ցերեկուայ նաեւ օրուայ սկիզբը նշանակող բառի:

է դառնում, թէ ինչու եւ ինչ Նաւասարդեան Առաւօտ էր տեսնում Արտաշէս թագաւորը:

Արդ գանք ծուխ ծխանիին: Ինչ է նշանակում «ծխանի», եւ ըստ այդմ ինչ ծխի մասին է խօսքը: Ըստ Հայկազեան բառարանի հեղինակների, ծխանի բառը կցուած է ծխահանք=ծխնելոյզ բառին (հատոր Ա, էջ 1018): Սրա համար բերուած միակ վկայութիւնը խնդրոյ առարկայ վիպական հատուածն է: Այսինքն, «ծխան» բառի իմաստը, ամենայն հաւանականութեամբ, որոշուած է այս միակ օրինակով, որով եւ այս բառի իմաստը Հայկազեան բառարանում եւս պայմանաւորուած է սոյն վիպական հատուածի իմաստի ընկալումով: Ինչպէս ընկալուել է հատուածի իմաստը, այնպիսի նշանակութիւն էլ տրուել է «ծխան» բառին: Եւ քանի որ վիպական հատուածի իմաստը տակաւին միանշանակ չէ ճշդուած, ուրեմն չի կարելի ճշդուած համարել նաեւ «ծխան» բառի իմաստը. այսինքն, վերանայման կարիք ունի այս բառի համար յիշեալ բառարանում տրուած բացատրութիւնը: Փորձենք դա պարզել հենց նոյն բառարանի օգնութեամբ: Այստեղ նոյն արմատով մի քանի բառեր են բերուած, որոնց իմաստները յուշում են նաեւ «ծխան» բառի բուն իմաստը: Ահա դրանք. **ծխանելիք,** որ եւ **ծխելիք**=նիւթ ծխելի, մանաւանդ խունկ: **Ծխեմ**=այրելով զխունկս՝ ի ծուխ լուծանել, կամ **ծախել,** խունկ արկանել՝ մատուցանել, խնկել: Կայ նաեւ **ծխիչ**=ծխօղ զխունկ բուրիչ: Բերուած բառերի իմաստները յուշում են, որ **ծխել, ծուխ...** բառերը բացի այսօրուայ սովորական իմաստից ունեն նաեւ ծիսական իմաստ. այն է՝ **խնկարկել,** պատարագի սեղանի անուշբոյր **խունկ:** Ըստ այսմ **ծխան** բառը կարելի է ընկալել, որպէս ծխացող պատարագի սեղան, ծխացող զոհամատուցման սեղան: **Եւ ծուխ ծխանի** կը նշանակի պարզապէս զոհաբերութեան սեղանից ելնող անուշաբոյր ծուխը: Յիշենք, որ նախքան քրիստոնէութիւնը ինչպէս այլ ազգերի, այնպէս էլ Հայոց մօտ ընդունուած է եղել կենդանիների զոհաբերութիւնը: Զոհաբերուող կենդանիները, կամ դրանց մարմնի ինչ որ մասերը ողջակիզում, այրում էին յատուկ զոհամատուցման սեղանի վրայ: Այդ կիզման ժամանակ կրակի վրայ ածում էին նաեւ զանազան բուրաւետ իւղեր, խէժեր, մասնաւորապէս՝ խունկ: Տարբեր ազգերի (մասնաւորաբար եբրայեցիների եւ հին յոյների) կրօնքներից գիտենք, նաեւ, որ այդ սրբազան ծէսի ժամանակ դէպի երկինք բարձրացող ողջակիզման ծուխին բաւական կարեւոր դեր է վերապահուել: Ըստ հին ազգերի պատկերացումների, այդ ծուխն էր աստուածներին իմաց անում զոհաբերութեան մասին, աստուածները իջնում գալիս էին, այդ ծուխը հոտոտում, գոհանում ու այլն (տես, օր., Ծննդոց, Ը, 21): Այսինքն, ողջակիզման ծէսի մի կարեւոր բաղադրիչն է եղել զոհարանից ելնող ծուխը: Որեւէ հիմք չունենք այս հարցում հայերին բացառութիւն համարելու եւ կարող ենք վստահ լինել, որ այս կարգի պատկերացումներ պէտք է եղած լինեն նաեւ հեթանոս Հայոց մօտ: (Դրա վերապրուկներ կարելի է դիտել այսօր հայ իրականութեան մէջ առկայ մատաղ անելու ժողովրդական սովորոյթը եւ կրօնական տարբեր ծէսերին ուղեկցող խնկարկութիւնը): Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ «ծուխ ծխանի» նշանակում է զոհարանից երկինք բարձրացող խնկաբոյր ծուխը, որը հեթանոս Հայոց պատկերացումների համաձայն պէտք է ունեցած լինի բացառիկ կարեւոր դեր: «Ծուխ ծխանի» բառերի այսպիսի իմաստաւորումով լիովին

տրամաբանական հասկացում է վիպական հատուածի առաջին տողը[16]: Մահամերձ Արտաշէս թագաւորը տենչում է ծխանի (զօհարանի) ծուխը, որից եւ կարող էր բժշկութիւն եւ կեանք ակնկալել: Եթէ սա միաւորենք Նաւասարդի Առաւօտի հետ, կը ստանանք, որ Արտաշէսի տենչացածը հենց Նաւասարդեան տօնի ժամանակ Առաւօտ ժամին մատուցուող ողջակէզի սրբազան ծուխն էր, որին, ամենայն հաւանականութեամբ, վերագրուած են եղել ինչ-ինչ աստուածային-մոգական յատկութիւններ: Այսպիսով լրիւ պարզ է դառնում, թէ ինչ է նշանակում նամակի «որում Արտաշէսն Պարթեւ բաղձայր մլոյ մրրկեալ ծխոյ...» տողը: Քանի որ **որում**=որի բառը վերաբերում է հանելուկում տրուած ամսաթուին, այսինքն՝ նաւասարդի մէկին, ուրեմն Գր. Մագիստրոսն այստեղ ասում է, որ Արտաշէսը բաղձում էր նաւասարդի մէկի (Նաւասարդեան տօնի օրուայ) Առաւօտ ժամին արուող զօհաբերութեան ծխին:

Արդ գանք յաջորդ տողերին. «զվազելն եղանց եւ զվագելն եղջերուաց»: Ի՞նչ եղնիկների վազք եւ եղջերուների վարգում է սա: Ինչպէս արդեն նշել ենք, նախորդ յետազօտողները դա միարժէք համարել են արքայական որս. ըստ Լ. Խաչիկեանի դա ծիսական որս է, որի արարողապետն է թագաւորը, ըստ այլոց՝ զուտ արքայական զուարճութիւն: Ամենաընդունելին, անշուշտ, ծիսական որս համարելն է, որովհետեւ մեղմ ասած, անտրամաբանական է, որ մահամերձ արքան, որպէս վերջին տենչանք, յիշէր արքայական ինչ որ զուարճութիւններ (ինչպիսիք էլ դրանք լինէին): Այդուհանդերձ, հնարաւոր է նաեւ այլ բացատրութիւն (ըստ իս՝ աւելի հաւանական): Դարձեալ յիշենք, որ Գր. Մագիստրոսը, ամենայն հաւանականութեամբ, լսած պիտի լինի վէպը ամբողջութեամբ, կամ գոնէ՝ շատ աւելի ամբողջական, քան իր բերած հատուածն է (անհաւանական է, որ միայն այդ կարճ հատուածը լսած լինէր, որն էլ այդքան լաւ համապատասխանէր իր կազմած հանելուկին. աւելի հաւանական է, որ նա, իմանալով ամբողջը, դրանից ընտրել է իրեն հարմար հատուածը): Այսինքն, լսած լինելով ամբողջը, նա պէտք է որ առաւել լրիւ իմանար հատուածի իմաստը, եւ, բնականաբար, իր իմացածն այդ մասին նա կարող էր ինչ որ կերպ արտացոլել հենց նոյն, խնդրոյ առարկայ նամակում: Նամակի սկզբնամասի քննութեամբ տեսանք, որ անդ նկարագրուած դիցական-առասպելական անցքերը ոչ թէ փոխաբերութիւններ ու համեմատութիւններ են, այլ սերտօրէն կապուած են Նաւասարդեան տօնի հետ եւ նկարագրութիւնն են այդ սրբազան օրուայ խորհրդաւոր ժամին կատարուող ինչ-ինչ տիեզերախորհուրդ իրադարձութիւնների: Միեւնոյն ժամանակ, նամակի մի մասը (բուն տոմարական հանելուկը) անմիջականօրէն վերաբերում է վիպական հատուածի երկրորդ տողին (եւ զառաւօտն Նաւասարդի): Ուրեմն, կարելի է ասել, որ նամակի միւս մասն էլ վերաբերի հատուածի միւս տողերին, այսինքն՝ նամակի սկզբնամասի դիցա-առասպելական նկարագրութիւնը առնչուի Արտաշէսի բաղձանքին: Իսկ Արտաշէսի բաղձանքի չորս կէտից չպարզուած մնացին միայն վերջին երկուսը: Ուրեմն փորձենք գտնել, թէ ինչ կապ կայ նամակի սկզբնամասի եւ եղնիկների վազելու ու եղջերուների վարգելու միջեւ: Ահա սկզբ-

---

[16] Այս մեկնաբանութեամբ կարիք չկայ նաեւ շարադրանքի մէջ մուծելու «բարձրացող», «ելնող», կամ նման այլ բառեր (ծխնելոյզներից (բարձրացող) ծուխը): Առանց որեւէ բառ մուծելու էլ տողը ինքնին հասկանալի է: Առաջին տողն աշխարհաբար կը լինի: «Ով կը տար ինձ ծուխը ծխանի (զօհարանի, ողջակէզի)»:

նամասի դիցական-առասպելական կերպարները. Զիածին, Մակավազեան, Արէս, Դորիական Տաւար, Քաղ: Իսկ վիպական հատուածում ունենք «զվազելն եղանց եւ զվագելն եղջերուաց»: Այսինքն ունենք վազող եղներ եւ վարգող եղջերուներ: Վազող եղները կարելի է զուգադրել Մակավազեանին, որի անունն իսկ նշանակում է «ի վերայ վազող», իսկ վարգող եղջերուները թէրեւս՝ Քաղին: Սրա համար հիմք է Եղջերուաքաղը, որի մասին, որպէս առասպելական էակի, վկայում է Դաւիթ Անյաղթը[17]: Ըստ նամակի սկզբի, Մակավազեանը մի հրաշունչ, մորուսաւոր վազվզող էակ է, որի դէմ մարտընչում եւ յաղթում է Արէսը (Վահագնը ըստ Լ. Խաչիկեանի): Ըստ երեւոյթին այս էակի շատ կարեւոր բնութագիրն է եղել վազելը, քանի որ եւ անունն է դա վկայում եւ էլ նամակում նա բնութագրուած է յօքնայածուկ (վազվզող) ածականով: Ըստ այսմ հասկանալի է, թէ ինչու է Արտաշէսը տենչում եղների հենց վազելը: Այսինքն, Արտաշէսը այս առասպելական էակին յիշում է իր ամենաէական կողմով՝ վազելով: Թէրեւս այդ վազելու հետ ինչ որ խորհուրդ է կապուած եղել. չի բացառում: Սակայն, անկախ դրանից, բերուած անունների եւ յատկանիշների ընդհանրութիւնը կարելի է բաւարար հիմք դիտել այս զուգադրումը նոյնացում համարելու համար:

Ինչ վերաբերում է Քաղ-եղջերու զուգադրմանը, սա կարող է այնքան էլ վստահելի չլինել. վիպական հատուածի եղջերուն կարող է աղերսուել նաեւ Զիածնի հետ: Այդուհանդերձ, ուշագրաւ է, որ ունենք առասպելական էակի Եղջերուաքաղ անունը, որը կարճուելով կարող էր տալ եւ եղջերու, եւ Քաղ: Այսպիսով, տեսնում ենք, որ վիպական հատուածում Արտաշէսի յիշատակած կենդանիները եւս առնչւում են Նաւասարդեան տօնի դիցական-առասպելական բովանդակութեանը: Ստացւում է, որ վիպական հատուածում Արտաշէսի ուզածները բոլորն էլ ծիսական խորհուրդներ ունեն, կապուած են պաշտամունքի հետ:

Մնաց քննել Արտաշէսի յիշատակած վերջին բանը. «մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք, որպէս օրէն է թագաւորաց»: Այս տողերը եւս ժամանակին ընկալուել են, որպէս արքայական որսի նկարագրութեան մասեր: Նկատենք սակայն, որ պարզ որսորդական փողահարութիւնը (թէկուզ եւ արքայական որսի ժամանակ) դժուար թէ այնքան էական մի արարողութիւն լինէր, որ աշխարհակալ թագաւորը դա յիշէր, եւ այն էլ՝ որպէս իր թագաւորական աստիճանը բնորոշող գործողութիւն («որպէս օրէն է թագաւորաց»): Նոյնիսկ եթէ խօսքը ծիսական որսին վերաբերէր, դարձեալ դժուար է որսորդական փողահարութեանը այդքան մեծ կարեւորութիւն տալը: Փորձենք այս փողահարութեան բացատրութիւնը փնտռել այլուր: Ինչպէս տեսանք, վիպական հատուածում Առաւօտ բառը ունէր ժամի իմաստ, այն ժամի, երբ կատարւում են ծիսական-պաշտամունքային մեծագոյն խորհուրդներ: Յայտնի է նաեւ, որ հայոց ժամանունները ունեն տարբերակներ. միեւնոյն ժամի համար մեզ են հասել անուններ, որ երբեմն շատ տարբեր են իրարից[18]: Պարզւում է ահա, որ Առաւօտն ժամի համար վկայուած է նաեւ մի այլ անուն՝ **Փողահարն:** Ի՞նչ է սա նշանակում, եթէ առաւօտ բառի ստուգաբանութիւնը այնքան էլ պարզ չէ, ապա **փողահար** բառի իմաստը միան-

---

[17] **Դաւիթ Անյաղթ,** «Սահմանք իմաստասիրութեան», Երկասիրութիւնք փիլիսոփայական, էջ 29, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1980:

[18] **Անանիա Շիրակացի,** նշ. աշխ., էջ 113:

գամայն հասկանալի է՝ փող հարելն, կամ փող հարողն: Ի՞նչ փողահարութեան մասին կարող է խօսք լինել: Վերեւում ասուածը հաշուի առնելով, կարող ենք այս **Փողահար** անունը ընկալել, որպէս Առաւօտ սրբազան ժամին կատարուող ծիսական փողահարութեան վկայութիւն: Եթէ տարուայ ամենակարեւոր տօնը Նաւասարդն էր, եւ Նաւասարդի տօնի մէջ էլ ամենակարեւորը Առաւօտ ժամն էր, այսինքն՝ տարուայ ամենակարեւոր ժամը հենց այդ օրուայ Առաւօտն էր, ապա լիովին սպասելի է, որ այդ ժամին լինէր հանդիսաւոր, ծիսական փողահարութիւն (որ կարող էր ազդարարել, օրինակ, Հայկի աստղի ծագումը, կամ մի ինչ որ աստուածութեան ծնունդ, կամ երկնային բարի ուժերի յաղթանակ եւն): Այսպէս հասկանալի է նաեւ Առաւօտ ժամի համար զուգահեռաբար մեզ հասած **Փողահար** անունը: Սրանով պարզւում է նաեւ Արտաշէսի յիշատակած փողհարութիւնը, որ ինքն անձամբ է կատարել: Ըստ երեւոյթին այդ փողհարութիւնն ունեցել է կարեւոր ծիսական (նաեւ տոմարական, քաղաքական) բովանդակութիւն: Ուշագրաւ է, որ փող ունեն նաեւ Սասնայ Ծռեր դիցավէպի հերոսները: Սանասարը ստորջրեայ պարտէզում Քուռկիկ Ջալալիի, Թուր Կեծկիի հետ միասին իր միւս զէնքերի շարքում (գուրզ, նիզակ, նետ-աղեղ, վահան) ստանում է նաեւ **Փող Պղլորին:** Այդ զէնքերը փոխանցւում են սերնդէ սերունդ: Այդ նոյն Պղլորի Փողը Մեծ Մհերից յետոյ ժառանգում է Դաւիթը: Սա պարզ որսորդական գալարափող չէ: Դաւիթը այդ փողը փչում է Մելիքի դէմ կռիւ գնալուց առաջ: Փաստօրէն, այստեղ փողահարութիւնը նախորդում է ամենավճռական պահին, դիցավէպի գլխաւոր գործողութեանը, որ է Դաւթի եւ Մելիքի մէնամարտը, բարու եւ չարի ամենավճռական կռիւը, որով նուաճուելու է յաղթանակը, փրկութիւնը: Ողջ դիցավէպում սա միակ դրուագն է, ուր խօսւում է այդ փողի կիրառման մասին: Ոչ որսորդութեան, ոչ էլ զանազան կռիւների ժամանակ փողահարութիւն չի նշւում: Այսինքն, այս փողը բացառիկ կարեւոր նպատակի համար է եւ կիրառւում է միայն ամենավճռական պահին: Այս փողահարութիւնը նաեւ աւետում է Դաւթի կատարելութեան հասնելը, լրիւ իր հօր տեղը բռնելը, սրանով է, որ Սասնայ Տան թափուր աթոռը նորից տէր է ստանում եւ Դաւթի մամիկը՝ Մհերի մայր Դեղձուն Ծամը ագից դուրս է գալիս: Այսինքն, ըստ մեր դիցավէպի, փողահարութիւնը ազդարարում է մեծ աւետիսն ու վճռական կռիւը:

Փողհարութեան այս երկու իմաստն էլ շատ լաւ հարմարւում են վիպական հատուածում Արտաշէսի ասածին: Տարուայ գլխաւոր տօնի ամենակարեւոր պահին թագաւորը փող է հարել կամ ազդարարելով բարու եւ չարի սկսուող կռիւը, կամ էլ՝ աւետելով սպասուած յաղթանակը, փրկութիւնը[19]:

Թմբուկ հարկանելն էլ պէտք է սրան լրացնող մի գործողութիւն լինէր: Օրինակ՝ դիցավէպում Դաւիթը **ինքը** փող է հարում եւ միաժամանակ **զարկել է տալիս** իր հօր սազը (թմբուկը փոխարինուած է սազով): Այս կերպ հասկանալի են դառնում վիպական հատուածի վերջին երկու տողերը՝ «մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք, որպէս օրէն է թագաւորաց»: Այս ընկալմամբ Արտաշէսի այս վերջին խօսքերն էլ տրամաբանօրէն կապւում են նախորդ տողերում տեղեկացած ծիսական, պաշտամունքային իրողութիւններին: Այսպիսով, վիպական հատուածը իմաստային առումով ընկալուեց որպէս:

---

[19] Խորենացին էլ պատմում է, որ Արտաշէսի յուղարկաւորման ժամանակ առջեւից պղնձէ փողեր էին հնչեցնում (Խորենացի, Բ. Կ.):

պէս մէկ ամբողջութիւն: Ստացուեց, որ մեզ հասած վիպական հատուածում Արտաշէս թագաւորի խօսքերը բոլորն էլ վերաբերում են Նաւասարդեան տօնին, կապուած են այդ տօնի օրուայ արքազան Առաւօտ ժամի, այդ ժամին կատարուող խորհուրդների եւ ծէսերի հետ:

*

* *

Վիպական հատուած եւ պատմական փաստեր: Արդ, նայենք, թէ նախընթաց քննութեամբ ստացուած պատկերը որքանով է համապատասխանում առկայ պատմական տուեալներին: Այսօր հայ պատմագիտութեան մէջ ընդունուած պատկերացումների համաձայն, Արտաշէս Ա-ն ն. Ք. 189 թ. վերականգնել է Մեծ Հայքի թագաւորութեան ինքնիշխանութիւնը, մէկ հզօր պետութեան մէջ միաւորել հայաբնակ երկրամասերի մեծ մասը, կատարել վարչական, ռազմական եւ այլ բարեփոխումներ, շէնացրել ու հարստացրել երկիրը: Ինչի մասին կարող է խօսել, ինչ կարող է յիշել մահուան մահճում մեծագործ թագաւորը[20]: Բնական է սպասել, որ մեռնող թագաւորը հաւերժութեան շեմին յիշէր զուտ իրեն, իր արքայական անձին վերապահուած մի գործողութիւն, ընդ որում այնպիսին, որ ինքը համարէր թագաւորի համար ամենակարեւորը, իր կեանքի ամենափայլուն էջը, իր մեծագոյն նուաճումը: Այդ կարգի գործողութիւնները կարող էին լինել կամ քաղաքական, կամ ռազմական, կամ էլ ազգային-կրօնական-ծիսական բնոյթի: Դատելով վիպերգի հատուածից, զուտ քաղաքական ու ռազմական բնոյթի գործողութիւններ այստեղ չկան, ուստի, ամենահաւանականը մնում է վերջինը: Այսինքն, եթէ վէպում այլ բաներ էլ ասել է Արտաշէսը, միեւնոյնն է, մեզ հասած հատուածում դրանց մասին խօսք չկայ: Իսկ ո՞րն է ազգային-կրօնական-ծիսական բնագաւառում Արտաշէսի կատարած մեծագործութիւնը: Յիշենք Խորենացու վկայածը Արտաշէսի կատարած Հայոց տոմարի վերականգնման մասին: «Զի թէպէտ եւ այլն ամենայն զոր յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգք եւ սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ եւ այլոց առաջնոց թագաւորացն՝ այլ ի մեծամեծ արուեստից եւ ի գիտութեան ունայնացեալք էին, ..., եւ զայսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք եւ կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ եւ զամսոց եւ զտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիր առ նոսա, այլոց ազգաց վարելով ... եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի» (Խորենացի, Բ, ՃԹ): Այս վկայութիւնը քննութեան է առել հ. Ղ. Ալիշանը եւ ենթադրաբար եզրակացրել, որ խօսքը թէրեւս Արտաշէս Բ-ի կողմից Հռոմէական տոմարին անցնելու մասին է[21]: Սակայն նկատենք, որ քննարկուող դարաշրջանում առաջաւոր Ասիայում (գուցէ եւ այլուր) սեփական տոմար գործածելը պետական ինքնուրոյնութեան, անկախութեան մի կարեւոր դրսեւորում է եղել: Օրինակ, յայտնի է, որ Տիգրան Բ Մեծը իրեն հպատակութիւն յայտնած սի-

---

[20] Այստեղ խօսքը այն մասին չէ, թէ տառացիօրէն ինչ էր յիշում թագաւորը, այլ այն, թէ նրան սիրած ու փառաբանած ժողովրդի պատկերացմամբ ինչ կարող էր կամ ինչ պէտք է նա յիշէր, ասէր: Եթէ նոյնիսկ թագաւորը վերջին շնչում ասած լինէր շատ սովորական, կենցաղային ինչ որ բաներ, միեւնոյնն է, ժողովրդական հազարամեայ խըմբագրութիւնը այն պիտի դարձնէր հերոսական, իր սիրելի կերպարին համապատասխան, եւ աւելին՝ այդ կերպարը լրացնող:

[21] **Ղ. Ալիշան**, Յուշիկք Հայրենեաց Հայոց, հ. Ա., էջ 89—90, Վենետիկ, 1869:

րիական եւ փիւնիկեան որոշ քաղաքների (Լաոդիկեա, Բերիթոս) **ի թիւս այլ ազատութիւնների** տուել է նաեւ **սեփական տոմար ունենալու իրաւունք**[22]: Ուրեմն, օրացոյցը եւ նրա հետ կապուած ծէսերը պետական ինքնուրոյնութեան խորհրդանիշեր են եղել, եւ բնական է ապասել, որ դրա հետ կապուած մեծագոյն ծէսն էլ կատարէր թագաւորը: Արդ, քանի որ Արտաշէսն է Մեծ Հայքի անկախութեան հիմնադիրը (տուեալ դարաշրջանում), ուրեմն նա էլ, որպէս իր թագաւորութեան ինքնիշխանութեան մի դրսեւորում, պիտի վերականգնէր, նորոգէր, հաստատէր Հայոց բնիկ օրացոյցը եւ դրա հետ կապուած ծէսերը: Խորենացու վկայութիւնից պարզ է, որ Արտաշէսից առաջ Հայքում առաջնորդում էին ուրիշ ազգերի տոմարներով (ըստ երեւոյթին խօսքը միայն պետական կիրառութեան մասին է. բնական է ապասել, որ հասարակ ժողովուրդը, անկախ քաղաքական կացութիւնից, միշտ էլ կիրառած լինի իր բնիկ օրացոյցը): Այս կերպ նաեւ լիովին հասկանալի է դառնում Մովսէս Խորենացու վկայութիւնը Արտաշէսի արած տոմարական բարեկարգութեան մասին:

Արդ, հաշուի առնելով այս ամենը, կարող ենք պարզ պատկերացնել, թէ ինչ կը լինէր Արտաշէսի վերջին խօսքը: Բնական է ապասել, որ մահուան մահճում ծերունի թագաւորը վերյիշէր Մեծ Հայքի պետական անկախացումը եւ, որպէս դրա մի կարեւոր դրսեւորում, սեփական տոմարի հիմնումը, կամ վերականգնումը, եւ երազէր դրա հետ կապուած ծէսն ու իր թագաւորական մասնակցութիւնը այդ ծէսին: Նաւասարդեան ծէսերը, փաստօրէն, Արտաշէսի համար պիտի խորհրդանշէին եւ իր քաղաքական ու ռազմական փայլուն յաջողութիւնները (որոնցով ինքը նուաճեց անկախութիւնը եւ իրաւունք ձեռք բերեց սեփական օրացոյց ունենալու) եւ էլ պիտի ունենային ազգային-կրօնական-ծիսական մեծագոյն խորհուրդ: Այսինքն, այս ծէսերը միաժամանակ կարող էին խորհրդանշել Արտաշէս Ա-ի բոլոր մեծագործութիւնները: Ուրեմն, աւելի քան բնական կը լինէր, որ հենց սրանց մասին լինէր թագաւորի վերջին խօսքը: Այսպիսով, առկայ պատմագիտական փաստերը, նաեւ Մովսէս Խորենացու վկայութիւնը լիովին համահնչուն են գիպական հատուածի քննութեամբ ստացուած պատկերին:

* * *

Եզրակացութիւններ: Ամփոփելով Մոկաց եւ Մանազկերտի Գրիգոր եպիսկոպոսին Գրիգոր Մագիստրոսի գրած նամակի քննութեան արդիւնքները, հանգում ենք յետեւեալ եզրակացութիւններին:

ա) Նամակի միջնամասում առկայ տոմարական հանելուկում ծածկագրուած է նաւասարդի Ա ամսաթիւը:

բ) Նամակի սկզբնամասում նկարագրուած են Նաւասարդեան տօնի հետ կապուած ինչ-ինչ դիցական-առասպելական էակների մարտնչումներ եւ այլ գործողութիւններ, որով այդ մասը եւս յուշում է նամակի միջին մասում ծածկագրուած նաւասարդի Ա ամսաթիւը:

գ) Նամակի վերջում բերուած վիպական հատուածում Արտաշէս թագաւորը խօսում է Նաւասարդեան տօնի եւ դրա հետ կապուած ծէսերի ու խոր-

---

[22] **Ռ. Լ. Մանասերեան,** Տիգրան Մեծ, Հայաստանի պայքարը Հռոմի եւ Պարթեւստանի դէմ, էջ 82, Հայաստան, Երեւան, 1987:

հուրդների մասին, որով սա եւս կոչուած է յուշելու տոմարական հաւելուկի լուծումը:

դ) Նամակն ամբողջութեամբ կառուցուած է որպէս հաւելուկ, բաղկացած երեք մասից, որոնցում դիցաբանական, տոմարական եւ վիպական-պատմական ձեւերով մատնանշւում է միեւնոյն ամսաթիվը՝ Նաւասարդի մէկը:

ե) Ամենայն հաւանականութեամբ, նամակը գրուած է որպէս հաւելուկ-առաջադրանք՝ տրուած իմաստութեան մրցութեան ժամանակ:

զ) Նամակը գրուած է 1044—1047 թթ. քառամեակում:

է) Նամակի խորագիրը հեղինակային չէ, եւ խորագրում շարադրուածն էլ չի համապատասխանում նամակի բովանդակութեանը:

ը) Նամակի շարադրանքում եւ խորագրում տեղ են գտել գրչական աղաւաղումներ:

Բացի այս, Գր. Մագիստրոսի աւանդած վիպական հատուածի քննութիւնը որոշ նոր տուեալներ է տալիս մեր նախնեաց ծէսերի եւ կրօնական-տոմարական պատկերացումների մասին: Մասնաւորաբար իմանում ենք, որ.

Ա) Հայոց տոմարական-ծիսական համակարգում մեծ կարեւորութիւն է ունեցել Առաւօտ ժամը (գիշերուայ 10-րդ ժամը): Տարին մի անգամ, Նաւասարդեան տօնի օրը խորհրդաւոր գիշերուայ Առաւօտ ժամին (կամ դրանից քիչ անց) դիտուել է Հայկն համաստեղութեան գլխաւոր աստղի (Հայկին ուսն արեւելեան) արեգակնային ամբարձումը:

Բ) Այս ժամի միւս անունը՝ Փողահար, վկայում է, որ այդ խորհրդաւոր, հանդիսաւոր ժամին կատարուել է ծիսական փողահարութիւն թագաւորի գլխաւորութեամբ (կամ հենց միայն թագաւորի կողմից): Փողահարութիւնն ուղեկցուել է թմբկահարութեամբ:

Գ) Ծիսակատարութիւնն ուղեկցուել է զօհաբերութեամբ. ընդ որում, «ծուխ ծխանի» է կոչուել ողջակէզի զօհարանից բարձրացող խնկաբոյր ծուխը, որ հաւատացեալների պատկերացումների համաձայն, ունեցել է ծիսական մեծ խորհուրդ եւ բուժիչ, կենարար զօրութիւն:

Դ) Ծիսական որսը, որի մասին ենթադրել են նախորդ յետազօտողները, ամենայն հաւանականութեամբ, չի եղել: Յամենայն դէպս, սոյն վիպական հատուածում որսի կամ ծիսական որսի մասին խօսք չկայ:

Ե) Վիպական հատուածում յիշատակուող կենդանիները՝ եղներ ու եղջերուներ (թէրեւս՝ Մակավազեան եւ Եղջերուաքաղ) դիցական-առասպելական էակներ են, որոնց գործողութիւնները կապուած են եղել Նաւասարդեան տօնի խորհուրդներին:

Այսպիսով, Նաւասարդեան տօնի ամենախորհրդաւոր մասի համար, ըստ այս քննութեան, ստանում ենք այսպիսի մօտաւոր պատկեր: Այդ գիշերութիւններ, պայքար. Վահագնը (Արէս) մարտնչելով Մակավազեանի (եղնեզօհաբերութիւն եւ մեծ կարեւորութիւն է ունեցել ողջակէզի ծուխը (ծուխ ծխանի), թագաւորն ինքը մասնակցել է ծէսին եւ Առաւօտ ժամին փող հարել, թմբուկ հարկանել տուել, ազդարարելով Հայկի աստղի ծագումը, կամ բարի աստուածների յաղթանակը, եւ կամ մի աստուածային ծնունդ: